Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, մշակութային մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով՝ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տեղափոխումը պետք է համապատասխանի Կառավարության «Բուսական աշխարհի օբյեկտների պահպանման և դրանց բնական պայմաններում

վերարտադրության համար օգտագործման կանոնակարգի հաստատման մասին» 2014 թ. Հուլիսի 31-ի թիվ 781N որոշման համաձայն: Օրենքով թույլատրվում է Կարմիր գրքում գրանցված բույսի տեղափոխումը, միայն այն դեպքում, եթե դա արվում է դրա պահպանման և գիտական հետազոտության նպատակով:

2.11. Կենդանական աշխարհի մասին օրենք

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը ազգային հարստություն է: Այն բնության ամբողջականությունն ապահովող առավել կարևոր տարրերից է, դրա էկոլոգիական հավասարակշռության և ներդաշնակ զարգացման երաշխիքը: Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը պետության բացառիկ սեփականությունն է:

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

Կենդանական աշխարհի մասին օրենքը նպատակ ունի՝ ապահովել կենդանիների պահպանությունը, դրանց գենետիկական բազմազանությունը, պահպանել կենդանիների պոպուլյացիայի ամբողջականությունը, պահպանել կենդանիներին խուսափելու անհարմարություններից, պաշտպանել միգրացիոն երթուղիները և կարգավորել կենդանիների տեսակների օգտագործումը:

Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ վայրերում վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումը, պահպանումը և այլ բնական վայր տեղափոխելը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:


Կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանումը և ներմուծումը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի «Արգավանդ տեղամասը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի վարչական տարածքում, Տանձուտ բնակավայրից 1.8 կմ հյուսիս-արևելք: Մոտակա բնակավայրերն են Արգավանդն (2.0կմ) ու Արևիկը (1.8 կմ) դրանց հետ կապն իրականացվում է գրունտային ճանապարհով, որոնք էլ ասֆալտապատ ճանապարհով կապված են Արմավիր և Էջմիածին քաղաքների հետ (նկ.1, 2):



Նկ.1 ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների քարտեզ:



Նկ.2 Հայցվող տեղամասի տեղադիրքի սխեման:

Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի պաշարները (ներառյալ «Արգավանդ տեղամասին») հաստատվել են Հայկական ԽՍՀ Երկրաբանական վարչության օգտակար հանածոների պաշարների տարածքային հանձնաժողովի 04.08.1977թ. №231 արձանագրությամբ՝ հետևյալ քանակներով և կարգերով.

A - 1735.0 հազ.մ³, B - 5758.4 հազ.մ³, C1 - 4774.3 հազ.մ³, A+ B+ C1 - 12267.7 հազ.մ³:

Հանքավայրի պաշարները գնահատվել է որպես լցանյութ ծանր բետոնի արտադրության համար: Հանքավայրի ավազը և կոպճագլաքարը բավարարում են համապատասխանաբար ԳՈՍՏ 8736-77 և ԳՈՍՏ 8268-74-ի պահանջներին:

Հայցվող տեղամասը, որի սահմաններում «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՄ» ՍՊ Ընկերությունը ցանկանում է իրականացնել ավազի արդյունահանում եզրագծվում է հետևյալ կոորդինատներով. (կոորդինատները ներկայացված են ARM WGS-84 համակարգով)

1.	4439145.0	8423337.0	12.	4439194.0	8423959.2
2.	4439140.9	8423376.1	13.	4439192.49	8423958.99
3.	4439134.5	8423627.8	14.	4439161.77	8423861.73
4.	4439136.5	8423752.0	15.	4439148.56	8423847.96
5.	4439211.5	8423815.5	16.	4439129.73	8423839.52
6.	4439224.63	8423817.18	17.	4439122.0	8423821.38
7.	4439223.02	8423832.34	18.	4439106.76	8423803.44
8.	4439236.63	8423858.84	19.	4439067.0	8423782.0
9.	4439260.65	8423898.46	20.	4439051.0	8423755.0
10.	4439293.79	8423954.8	21.	4439084.0	8423366.5
11.	4439305.26	8423974.05			

Նշված կոորդինատներով եզրագծված տեղամասում օգտակար հանածոյի և մակաբացման ապարների քանակները բերված են աղյուսակ – 1 ում:

Աղյուսակ 1

Օգտակար հանածոյի և մակաբացման ապարների ծավալները ըստ հաշվարկային բլոկների

Բլոկի համարը, պաշարի կարգը	Բլոկի հիմքի մակերեսը, (մ ²)	Հզորությունները, (մ)	Ծավալներ, (մ ³)
		Օգտակար հանածո	Օգտակար հանածո
16-A	27220	3.79	103163.8
15-B	20313	4.55	92424.2
17-C1	47533	1.35	64169
Ընդամենը			259757
Ժամանակակից			Ժամանակակից

		առաջացումներ	առաջացումներ
16-A	27220	0.56	15243
15-B	20313	0.37	7516
17-C1	47533	0	0
Ընդամենը			22759

3.1. Նախագծի հիմնական դրույթները

ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Արգավանդի տեղամասի «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին հատկացվող բացահանքը նախատեսվում է շահագործել մեկ տեղամասով:

Արդյունաբերական պաշարները կազմում են՝ 259757 մ³ մարվող (241990 մ³ արդյունահանվող)՝ A+B+C₁ կարգով:

Հանքավայրի ծառայման ժամկետը ընդունվում է 20 տարի:

- Կորզվող պաշարները կազմում են ընդամենը 241990 մ³ ավազակոպճազաքարային խառնուրդ,
- Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում 12988 մ³ (մարվող) 12099.5 մ³ (արդյունահանվող) ավազակոպճազաքարային խառնուրդ,

Հանքավայրի շահագործումը իրականացվելու է բաց լեռնային աշխատանքներով և նախատեսվում է՝ ,

- Արդյունահանված ավազակոպճազաքարային խառնուրդի իրացում տեղում, սպառողի ավտոտրանսպորտով,
- Արդյունահանման աշխատանքների կատարում էքսկավատոր-դրագլայնի կամ էքսկավատորի միջոցով,
- Մշակված տարածքի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա,
- Բացահանքի արտադրական հրապարակում բեռնարկղային տիպի գրասենյակի տեղադրում:

Մակաբացման ապարների կուտակումը կկատարվի բացահանքի եզրագծի հյուսիսային մասում: Հետագայում հնարավորություն ստեղծվելուց հետո մակաբացման ապարները նախատեսվում է տեղադրել հանքավայրի արդյունահանված հատվածի վրա:

3.2. Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- Բացահանքի առավելագույն երկարությունը - 657.0մ,
- Բացահանքի առավելաույն լայնությունը - 110.0մ,
- Մշակվող ԱԿԳԽ խառնուրդի հաստաշերտի միջին հզորությունը – A+C₁ բլոկ 5.14մ, B+C₁ բլոկ 5.9մ,

- Բացահանքի առավելագույն խորությունը - 6.27մ,
- Բացահանքի օտարման մակերեսը - 4.75հա,
- ԱԿԳՔ խառնուրդի հաշվեկշռային պաշարները - 259757 մ³,
- ԱԿԳՔ խառնուրդի կորզվող պաշարները - 241990 մ³,
- Մակաբացման ապարների ծավալը – 22759 մ³:
- Մակաբացման միջին գործակիցը՝ 0.09 մ³/մ³

3.3. Նախագծային կորուստները

Բացահանքի շահագործման ժամանակ նախագծային կորուստները՝

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների - կախված օգտակար հաստաշերտի եզրագծի բարդության աստիճանից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում և կազմում են 14416 մ³ (5.55%):

2. Շահագործողական կորուստները - Տվյալ դեպքում նրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից և ընդունվում են 0.95%՝ 2468 մ³:

3. Կորուստներ, որոնք մնում են բացող խրամի տակ՝ 0.34% կամ 883 մ³:
Այսպիսով՝ բացահանքի կորուստները կազմում են՝ 17767 մ³ կամ 6.84%:

3.4. Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքի ռեժիմը

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ ավազի զանգվածի կազմում է.

$$Q = \frac{259757 \times (100 - 6.84)}{20 \times 100} = 12099.5 \text{ մ}^3$$

Որտեղ՝ 6.84%-օգտակար հանածոյի կորուստներն են արդյունահանման ժամանակ:

259757 մ³ բացահանքի վերջնական եզրագծի մեջ ներառված պաշարների քանակն է:

20 – բացահանքի ծառայման ժամկետն է:

Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունվում է 260 օր, աշխատանքային հերթափոխի քանակը՝ օրվա մեջ – 1, հերթափոխի տրոհությունը – 8 ժամ

Բացահանքի տարեկան և օրական (հերթափոխային) արտադրողականությունները ըստ օգտակար հանածոյի և մակաբացման ապարների բերված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Հ/Հ	Մշակվող ապարների անվանումը	Չափ. միավորը	Բացահանքի արտադրողականությունը	
			Տարեկան	Հերթափոխում
1.	Մակաբացման ապարներ	մ ³	1138	4.4
2.	ԱԿԳԽ արդյունահանվող զանգված	մ ³	12099.5	605

3.5. Բացահանքի ծառայման ժամկետը

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է.

$$T = t_1 + t_2, \text{ տարի}$$

Որտեղ՝ t_1 - բացահանքի շինարարության տևողությունն է՝ 0,2 տարի,

$$t_2 = (Q_p - Q_2) / Q_{տ},$$

t_2 - բացահանքի շահագործման տևողությունն է,

Q_p - բացահանքի վերջնական եզրագծի սահմանների մեջ ներառված ԱԿԳԽ կորզվող պաշարների քանակն է, $Q_{տ}=241990$ խմ,

Q_2 - Բացահանքի շինարարության ժամանակ արդյունահանված ԱԿԳԽ զանգվածի քանակն է / ուղեկցող հանույթն է/,

$$Q_2 = 2000 \text{ խմ},$$

$Q_{տ}$ -բացահանքի տարեկան արտադրողականությունն է ըստ ԱԿԳԽ զանգվածի $Q_{տ} = 9875$ խմ,

$$t_2 = (241990 - 2000) / 12099.5 = 19.8 \text{տ},$$

$$T = 19.8 + 0.2 = 20 \text{ տարի:}$$

3.6. Հանքավայրի բացումը

Հանքավայրում աշխատանքները սկսվելու են բացահանքի արևմտյան մասից:

Քանի որ հանքավայրը գտնվում է արդեն իսկ առկա գրունտային ճանապարհի հարևանությամբ, ուստի մուտքային ավտոճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Աշխատանքները կատարվում են, էքսկավատոր KAMATSU PC-300-8-ով, բեռնիչ L-34-ով, ավտոինքնաթափ SHACMAN X 3000 լեռնատրանսպորտային համալիրով:

3.7. Մակաբացման աշխատանքները

Մակաբացման ապարները ԱԿԳԽ ծածկող դեյուվիալ-այուվիալ նստվածքներն են, որոնց հզորությունը հասնում է 0.56մ: Այդ նստվածքները ժամանակակից նստվածքներ են ԱԿԳԽ կտորներով: Մակաբացման ապարների ծավալը կազմում է 22759 մ³: Մակաբացման ապարները բեռնիչով կլցվեն բեռնատար մեքենայի մեջ և կտեղափոխվեն լցակայտ: Լցակայտը գտնվում է բացահանքի հյուսիսային մասում (տես գլխավոր հատակագիծ):

Մակաբացման միջին գործակիցը՝ 0.09 մ³/մ³

3.8. Արդյունահանման աշխատանքները

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից հանքաշերտի մշակման ժամանակ ընդունված է ընդլայնական միակողանի, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակայտ տեղափոխմամբ: Ընդունված մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. աստիճանների բարձրությունը – 3.085 մ
2. վերջնական դիրքում /2հանքաստիճաններ միացվելուց հետո/-6.17մ,
3. աշխատանքային թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ - 45°-50°;

4. մարված հանքաստիճանի թեքման անկյուն – 45°-50°;
5. ընթացքաշերտի լայնությունը – 8.5մ;
6. էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 18 մ:
7. Աշխատանքային հրապարակի լայնությունը – 30մ:

3.9. Հանույթաբարձման աշխատանքներ

ԱԿԳԽ արդյունահանման աշխատանքները կատարվում է դեպի ներքև շերտեփանման եղանակով, 1.4 մ³ շերտեփի տարողությամբ KOMATSU PC 300-8 մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը սպառողների տրանսպորտային միջոցների մեջ:

KOMATSU PC 300-8 մակնիշի էքսկավատորի շերտեփման խորությունը ծայրային անցման դեպքում կազմում է 6.6 մ, որը լիովին բավարարում է օգտակար հաստաշերտը մեկ աստիճանով մշակելու համար:

KOMATSU PC 300-8 էքսկավատորի տարեկան արտադրողականությունը ԱԿԳԽ զանգվածը արդյունահանելու և կույտավորելու համար որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{տ} = Q_{եկ} \times N_{տ} \times K$$

Որտեղ՝ $Q_{եկ}$ – էքսկավատորի հերթափոխային արտադրողականությունն է.

$$Q_{եկ} = \frac{3600 \times q \times T \times K_{\delta} \times K_{\epsilon}}{t_{g} \times K_{\phi}}$$

Որտեղ՝ q – էքսկավատորի շերտեփի մեջ գտնվող ապարների ծավալն է:

T – հերթափոխի տևողությունն է, $T=8$ ժամ

K_{δ} – ժամանակի օգտագործման գործակիցն է հերթափոխի ընթացքում, $K_{\delta} = 0.85$

K_{ϵ} – գործակից է, որը հաշվի է առնում ապարների ջրառատությունը, $K_{\epsilon} = 0.9$

K_{ϕ} – էքսկավատորի շերտեփի մեջ գտնվող ապարների փխրեցման գործակիցն է $K_{\phi} = 1.18$

$N_{տ}$ – տարվա ընթացքում հաշվարկային աշխատանքային հերթափոխերի քանակն է

K – գործակից է, որ հաշվի է առնում ոչ բարենպաստ կլիմայական պայմանները

սեզոնի ընթացքում և էքսկավատորի անհրաժեշտ պլանա-արտադրական վերանորոգումները, $K = 0.9$

$$Q_{եկ} = \frac{3600 \times 1 \times 8 \times 0.85 \times 0.9}{26 \times 1.18} = 718.1 \text{ մ}^3$$

$$Q_{տ} = Q_{եկ} \times N_{տ} \times K = 718.14 \times 260 \times 0.9 = 168044.7 \text{ մ}^3$$

Էքսկավատորի հերթափոխային արտադրողականությունը ԱԿԳԽ կույտից ավտոինքնաթափի մեջ բարձելու համար որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{\text{նր}} = \frac{3600 \times q \times T \times K_{\text{ժ}} \times n_2 \times K_1}{(t_b + t_n) \times K_{\text{փ}}}$$

Որտեղ՝ n_2 – ավտոինքնաթափի մեջ բարձվող էքսկավատորի շերտերի քանակն է, 5

K_1 – բարձման ժամանակ էքսկավատորի շերտի լցման գործակիցն է, $K_1=1$

t_b – ավտոինքնաթափի բարձման տևողությունն է, $t_b=130$ վրկ

t_n – ավտոինքնաթափը բարձման տակ տեղադրելու տևողությունն է, $t_n=30$ վրկ

$K_{\text{փ}}$ – ապարների փխրեցման գործակիցն է

$$Q_{\text{նր}} = \frac{3600 \times 1 \times 8 \times 0.85 \times 5 \times 1}{(130+30) \times 1.18} = 648.3 \text{ մ}^3$$

$$Q_{\text{տր}} = 648.3 \times 260 \times 0.9 = 151702.2 \text{ մ}^3$$

Հանույթաբարձման աշխատանքների համար նախատեսվում է մեկ հատ 1.4 մ³ շերտի տարողությամբ KOMATSU PC 300-8 մակնիշի էքսկավատոր:

Օժանդակ աշխատանքների համար էքսկավատորի հետ ընդունվում է նաև 1 հատ L-34 մակնիշի բեռնիչ:

3.10. Բացահանքի մշակման ժամանակացույցային պլանը

Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում կատարվում է բացահանքի մշակման ժամանակացույցային պլանին համապատասխան, որի համաձայն արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել 2.31մ բարձրությամբ ենթահանքաստիճաններով, վերնից – ներքև, մեխանիզացված եղանակով:

Մշակվող ԱԿԳԽ զանգվածի քանակը տարվա ընթացքում ընդունվում է 12099.5մ³: Մակաբացման ապարները բացահանքում կազմում են 22759 մ³: Մակաբացման ապարները բեռնիչով բարձվում են ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում լցակույտ:

3.11. Լցակույտային աշխատանքները

Հանքավայրի շահագործման շրջանում մակաբացման ապարները պահեստավորվում են բացահանքի սահմաններից դուրս՝ լցակույտի տեղամասում:

Մակաբացման ապարներ՝ 22759 մ³:

Լցակույտի առավելագույն բարձրությունը կազմում է՝ 2մ: Զբաղեցրած մակերեսը վերևում կազմում է՝ 10000մ², հիմքի մասում՝ 17700մ² մակերես, կողերի թեքման անկյունը 35°:

Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է շահագործված հանքախորշում ավազանների կառուցում:

3.12. Բացահանքի ջրամատակարարումը և ջրահեռացումը

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է փոշենստեցման, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է GAZ-331040 VALDAI մակնիշի բեռնատար ջրատար մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 2,

N - ԻՏՍՍ և գրասենյակային աշխատողների ջրածախսի նորման՝ - 0.009մ³,

n_1 - բանվորների թիվն է - 2,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով, $W = (2 \times 0.009 + 2 \times 0.025) \times 260 = 17.68$ մ³/տարի, միջին օրական 0.068մ³:

Կենցաղային կեղտաջրերը՝ $0.218 \times 0.85 = 0.18$ մ³ օրական լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են սահմանված կարգով:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ² տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ²: Փոշենստեցման մակերեսները կազմում են լցակույտի վրա 17700մ² և ավտոճանապարհների վրա 500մ², ընդամենը 18200մ²: Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ², կստանանք՝ $18200 \times 0.5 = 9100$ լիտր:

Նախատեսվում է ընդունել 1 ջրող ավտոմեքենա 6տ ջրի տարողությամբ, որը այդքան ջուրը ցնցուղում է 2 երթով, աշխատանքային հրապարակը՝ 2 անգամ:

3.13. Նախագծի այլընտրանքները

Նախատեսվող գործունեության արդյունքում արդյունահանված օգտակար հանածոն օգտագործելու է շինարարության մեջ: Հայցվող տարածքի դիրքը և ապարների տեղադրությունը թույլ են տալիս իրականացնել հանքավայրի շահագործումը միայն բաց եղանակով: Այս տեսանկյունից գործունեության այլընտրանքները դիտարկվել են հաշվի առնելով հանքավայրի ծառայման ժամկետը և բացահանքի արտադրողականությունը, այն է. բարձրացնել արտադրողականությունը՝ կրճատելով բացահանքի ծառայման ժամկետը կամ հակառակը:

Շահագործման 20 տարվա տարբերակը՝ 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տնտեսապես ավելի շահավետ է և բնապահպանական տեսակետից նախընտրելի, քանի որ սահմանափակում է ծանր տեխնիկայի աշխատաժամերը, օգտակար հանածոյի կուտակումները, հետևաբար նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության տևողությունն ու լրացուցիչ բնապահպանական ազդեցություններ: Ընտրված տարբերակը հանդիսանում է շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցողը:

Որպես այլընտրանք կարելի է դիտարկել գրոյական տարբերակը, երբ հայցվող տարածքը չի շահագործվում, սակայն այն լավագույնը չէ, քանի որ նման տարբերակի դեպքում ազդակիր համայնքները որևէ օգուտ ունենալ չեն կարող:

Բացահանքի շահագործումը դրական ազդեցություն կունենա համայնքի

սոցիալական կյանքի վրա՝ ապահովելով 8 աշխատատեղեր: Աշխատակիցների հիմնական մասը նախատեսվում է ընդգրկել է մոտակա համայնքներից, որի արդյունքում համայնքի բնակիչները հնարավորություն կունենան ստանալու միջինից բարձր աշխատավարձ:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կառավարելի է և նախատեսվող գործունեությունը, չունենալով էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, դրական ազդեցություն կունենա ազդակիր համայնքի սոցիալական կյանքում:

Բացի այդ «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն նախատեսում է պարբերաբար հանդիպել ազդակիր համայնքի ղեկավարության հետ՝ քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

4. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ, ԼՑԱԿՈՒՅՏԱԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Բացահանքի շահագործման ընթացքում՝ կապված տեխնոլոգիական գործընթացների հետ, կարող են առաջանալ մի շարք այլ արտադրական թափոններ, որոնք բնապահպանական տեսակետից ունեն տարբեր վտանգավորության դասեր:

4.1. Մակաբացման ապարներ

Հանքավայրի շահագործման ընթացքում առաջանալու է 22759 մ³ ծավալի մակաբացման ապար, որոնք ներկայացված են ժամանակակից ջրաբերուկային նստվածքներով՝ միախառնված կոպճի և գլաքարերի բեկորների հետ:

Համաձայն նախագծային լուծումների օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել էքսկավատոր-ավտոհինքնաթափ համակցությամբ՝ մեկ հանքաստիճանով, օգտակար հաստվածքի ամբողջ խորությամբ: Արդյունահանման աշխատանքներն իրականացնելուց հետո նախատեսվում է մակաբացման ապարներով լճակի վրա կառուցել ճանապարհներ:

Ըստ միներալային և ապարաբանա-քարաբանական կազմի մակաբացման ապարները կազմված են տարբեր կազմի լեռնային ապարների և միներալների հետաբերուկ տարբեր ֆրակցիանների նստվածքներից, որոնք իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների և հետևաբար շրջակա միջավայրի և մարդկանց առաջընթացի վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի համաձայն այս թափոնը համապատասխանում է «փոխր մակաբացման ապարներ» տեսակին (դասիչ՝ **3400012001995**):

ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017թ. N 689- Ն որոշման տվյալ թափոնի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի «գործնականորեն անվտանգ», այն կդասվի վտանգավորության V դասին:

4.2. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան

Բեռնատար և հատուկ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում բացահանքի ավտոհավաքակայանում գոյանում է տարեկան 0.070տ շահագործման ժամկետն անց բանեցված կապարե կուտակիչներ և խոտան:

Այդ թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 9211010013012:

Թափոնի կազմը՝ պլաստմասե (պոլիպրոպիլեն) իրան՝ 10%, կապարե թիթեղներ՝ 70-75%, էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ 15-20%:

Պլաստմասե իրան՝ ֆիզիոլոգիական տեսակետից գրեթե անվնաս է: Իրանի քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ: Ընկնելով մարդու օրգանիզմ, ֆտալատների միայն աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են նաև չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը:

Կապարե թիթեղներ՝ կապարը կուտակվում է օրգանիզմում, առաջացնելով խրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա:

Էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթների գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելու ժամանակ դժվարանում է շնչառությունը, առաջանում է հագ, երբեմն՝ լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ: Բանեցված կապարե կուտակիչները հրդեհապայթյունավտանգ չեն, սակայն կուտակիչներում պարունակվող էլեկտրոլիտը օժտված է կոռոզիոն ակտիվությամբ և թափվելու դեպքում կարող է առաջացնել մետաղական և ոչ մետաղական իրերի քայքայում:

Հանքավայրի տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

Տարածքը, որտեղ հետագայում անհրաժեշտություն կառաջանա բանեցված կուտակիչների պահպանում, պետք է ունենա օդափոխության համակարգ: Բանեցված կուտակիչները պետք է դրվեն հատուկ տակդիրների վրա, տակդիրի եզրերը պետք է ունենան 5սմ-ից ոչ պակաս բարձրություն: Հատակը պետք է պատրաստված լինի քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն նյութից և բացառի թափված էլեկտրոլիտի ներծծումը հողային շերտ: Տարածքը, որտեղ պահվում են կուտակիչների թափոնները, պետք է հեռացված լինի վարչակենցաղային շինություններից:

4.3. Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ

Թափոններն առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները յուղերը պարբերաբար փոխարինվում են նորերով:

Ծածկագիրը՝ 54100203 02 03 3: կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Տարեկան առաջանում է մոտ 0.2 տ

թափոն: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է Տանձուտ բնակավայրի մասնագիտացված կազմակերպություններում:

4.4. Բանեցված շարժիչների յուղերի թափոններ

Տարվա ընթացքում կառաջանա շուրջ 0.1տ բանեցված շարժիչների յուղ: Թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, կոդ՝ 54100201 02 03 3 «Բանեցված շարժիչների յուղերի թափոններ»: Բանեցված յուղերը հրդեհավտանգ են, ռեակցիոնունակություն և կոռոզիոն ակտիվություն չունեն: Թափոնների կազմը. յուղ՝ 94.6 %; մեխանիկական խառնուրդներ՝ 2.1%; ջուր՝ 3.2%:

Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի իրականացվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվում է Աբովյան քաղաքի մասնագիտացված կազմակերպություններում:

Եթե անհրաժեշտություն առաջանա բանեցված յուղերի տեղում հավաքելու և պահելու ապա անհրաժեշտ է հետևել պահպանման կանոններին:

Բանեցված յուղերը հավաքվում են հերմետիկ փակվող մետաղյա տակառներում և պահվում հատուկ առանձնացված տարածքում: Տարածքը պետք է ունենա օդափոխության համակարգ, ծածկ և անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից պատրաստված հատակ՝ օժտված դրենաժային համակարգով: Տարաները պետք է դրված լինեն մետաղական տակդիրների վրա: Տակդիրի ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան ընդհանուր ծավալի 5%-ը: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի տակառներում մնա բավականին ազատ տարածք՝ յուղի հնարավոր ընդարձակման համար: Պետք է խուսափել հողերի վրա յուղերի թափումից: Աշխատած յուղերը օգտագործվում են հիդրավլիկ համակարգերում և վորպես վառելանյութ:

4.5. Բանեցված դողածածկեր

Ծածկագիրը՝ 5750020013004: Կազմը՝ բութադիենային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%: Էկոթունավոր է, պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Էռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում: Տարեկան գոյանում է շուրջ 0.1տ բանեցված դողածածկ:

4.6. Կենցաղային աղբ

Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն:

Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին՝ ծածկագիր՝ 91200400 01 00 4: Այս թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ըստ ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման, գնահատվում է որպես «ցածր»:

Մեկ մարդու կենցաղային աղբ առաջացնելու նորման 0,3 մ³ (0,25տ/մ³) /տարի է: Հանքավայրում մշտապես աշխատելու են 8 մարդ: Հանքավայրում տարեկան առաջանալու է $8 \times 0.3 = 2.4 \text{մ}^3 \times 0.25 \text{տ} = 0.6 \text{տ}$ կենցաղային աղբ:

Այս թափոնները կտեղափոխվեն Տանձուտ բնակավայրի աղբահավաք կետեր, որտեղից համայնքի կոմունալ ծառայությունը այն կտեղափոխի աղբավայր:

Այս տեսակի թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առաջնության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Թափոնների վերաբերյալ ամփոփ բնութագրիչները ներկայացված են աղ.3-ում:

Աղյուսակ 3

Թափոնների ամփոփ բնութագրիչները

№	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, տ/տարի
1	օգտակար հանածոյի արդյունահանումից առաջացած մակաբացման ապարներ	III	3400012001995	22759 մ ³
2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	9211010013012	0.07
3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	III	5410030302033	0.20
4	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	5410020102033	0.1
5	Բանեցված դողածածկաններ	IV	5750020213004	0.1
5	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.6

Թափոնների տեղափոխման, կուտակման ու պահպանման ժամանակ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցություններ չեն գրանցվել:

Ելնելով վերոգրյալից հանքավայրում ձևավորվող թափոնի օբյեկտը չի համապատասխանում ՀՀ կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման հավելված N1-ի ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման «Ա» կատեգորիային:

Թափոնների օբյեկտներում և նրանց հարակից տարածքներում նախատեսված է մոնիտորինգի համակարգի կիրառում: Շրջակա միջավայրի մոնիթորինգի տվյալները բերված են նախագծի «բնապահպանական կառավարման պլան » բաժնում:


5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Հանքավայրի ֆիզիկա աշխարհագրական տեղադիրքը

Հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են Տանձուտ, Արմավիր, Արևիկ Այգեշատ բնակավայրերը:

Տանձուտ բնակավայրից հանքավայրի հեռավորությունը կազմում է 1.8 կմ, Արևիկ բնակավայրից՝ 1.8 կմ (նկ.3): Բնակավայրերի հետ կապն իրականացվում է գրունտե ճանապարհով: Հանքավայրից մինչև H15 մայրուղին ընկած հեռավորությունը 2.5 կմ է:

Հանքավայրի անմիջապես հարևանությամբ Հոկտեմբերյանի ԱԿԳԽ հանքավայրի Արգավանդ-2 տեղամասն է, որի հանքային իրավունքը տրամադրված է «ԻԿՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ Ընկերությանը (նկ.4):



Նկ.3: Հայցվող տեղամասի իրադրային սխեման:

5.2. Ռելիեֆ և երկրաձևաբանություն


Աշխարհագրական տեսակետից տեղամասի շրջանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան մասում և իրենից ներկայացնում է ընդարձակ հարթավայրային տեղանք՝ կտրտված ոռոգման ջրանցքներով: Ջրանցիքի ամենամոտ հեռավորությունը հանքավայրից կազմում է 0.5 կմ (նկ.3):

Հարթավայրը սակավաթեք անկում է հարավ-արևմուտք դեպի Ժամանակակից Արաքսի գետահովիտը:


Հանքավայրի շրջանի բացարձակ նիշերը տատանվում են 845-865 մ իսկ բուն

հանքավայրում՝ 852 - 854 սահմաններում: Ինչը ցույց է տալիս, որ շրջանի ռելիեֆի թեքության անկյունը 3° է կազմում (նկ.4):

Հանքավայր գտնվում է կուտակումային ռելիեֆի վրա, այն իրենից ներկայացնում է այլովիալ, այլովիալ-ոդոդատային տափարակ (նկ.5):



Նկ.4: ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Արգալանդե տեղամասի շրջանի ռելիեֆի լանջերի թեքությունների սիստեմատիկ քարտեզը (Հատված Հայաստանի ազգային ատլասից):



Նկ.5 Հայցվող տեղամասի շրջանի երկրաձևաբանության սխեմատիկ քարտեզ, (հասված ՀՀ Ազգային ատլասից):

5.3. Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը

Հանքավայրը գտնվում է Մերձարաքսյան իջվածքում, որը երկրաբանական տեսակետից իրենից ներկայացնում է միջլեռնային տեկտոնական իջվածք /ըստ Հ. Գաբրիելյանի ու Ա. Վեհունու/ հերցինյան ծալքավորված հիմքի վրա և ծածկված է միջին եոցենի մինչև 1100 մ հզորությամբ կավերով, տուֆաավազաքարերով, տուֆաակերուլիտներով, տուֆաարգիլիտներով և օլիգոցենի հասակի մոլասային խայտաբղետ շերտախմբով, որի հզորութանը շուրջ 600 - 700 մ է և ներկայացված է

կարմրագորշագույն կավերով, գիպսատար կավերով, ալերոլիտներով, ավազաքարերով: Վերջիններս ծածկված են ստորին չորրորդականի հասակի ցամաքային և լճային նստվածքներով, որոնք էլ իրենց հերթին ծածկված են Արաքսի ժամանակակից բերվածքներով:

Արարատյան դաշտի մերձարաքսյան իջվածքի ակումուլյատիվ լճադարավանդային հարթավայրը ձևավորվել է վերին պլիոցեն-չորրորդականի ընթացքում՝ Արաքս և Սևջուր գետերի մեանդրման արդյունքում, և տեղամասի հարակից տարածքում ներկայացված է գետերի մշտական հոսքի մակարդակից 2.5-5.0 մ բարձրությամբ Արաքսի ստորին լճային դարավանդի վերին չորրորդական հասակի այլուվիալ, այլուվիալ-պրոյուվիալ նստվածքներով և մեղմաթեք հարթավայրի հունամերձ հատվածի ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ նստվածքներով:

Պլիոցեն - չորրորդական հասակի տերրիգեն և հրաբխածին առաջացումների մերձհորիզոնական հաստվածքը աննշան անկյունային աններդաշնակությամբ ծածկում է թույլ ծայրավոր հիմքի միոցենի նստվածքներին:

Այս համակարգի ապարները բերված երկրաբանական քարտեզի սահմաններում հատվել և ուսումնասիրվել են Փշատավան գյուղի հյուսիս-արևելքում հորատված խորը հորատանցքով և ներկայացված են (ներքևից վերև) Հացավանի, Հոկտեմբերյանի, Ջրվեժի և Հրազդանի շերտախմբերով:

Ներքևից վերև շերտախմբերը ներկայացված են հետևյալ կազմով.

- Ստորին միոցեն (Հացավանի շերտախումբ) - ներկայացված է խայտաբղետ կավերի (կարմրագույն, գիպսատար), միկրոկոնգլոմերատների, այրվող թերթաքարերի հերթափոխվող շերտերով: Այս ապարների հզորությունը ըստ գրականության տվյալների գերազանցում է 250 մ-ը:

- Միջին միոցեն (Հոկտեմբերյանի շերտախումբ) - ներկայացված է վերին երկու հորիզոններով, բաղկացած միկրոկոնգլոմերատների ու ավազակավերի հերթափոխվող շերտերով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 520 մ:

- Ջրվեժի շերտախումբ - ներկայացված է գիպսաաղաբեր կավերով՝ քարաղի, գիպսի և անհիդրիդի դարսաշերտերով, որի ընդհանուր հզորությունը մոտ 165 մ է:

- Վերին միոցեն (Հրազդանի շերտախումբ) - ներկայացված է կավերի, ավազաքարերի ու կոնգլոմերատների հերթափոխվող շերտերով: Այս ապարների ընդհանուր հզորությունը մոտ 115 մ է:

- Ստորին-միջին պլիոցեն - ներկայացված է կավերով, ավազներով, կոպճազաքարերով, հիմքում դոլերիտային բազալտների հոսքերով, որոնց հզորությունը մոտ 150 մ է:

- Վերին պլիոցեն - չորրորդական ժամանակաշրջանում ակտիվ հրաբխականության և Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման պայմաններում՝ այստեղ ձևավորված լճային ավազանում կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր՝ մինչև 200 մ հաստությամբ լճագետային նստվածքներ: Այս համակարգի կտրվածքում առանձնացվում են.

- Արագածի շերտախմբի ստորին և նթաշերտախմբի վերին դարսաշերտի հրաբխածին ապարների հաստվածքը՝ մինչև 150 մ ընդհանուր հզորությամբ, որը ներկայացված է անդեզիտաբազալտներով, խարամներով և լավաբրեկչիաներով:

- Չորրորդական ժամանակաշրջան - ներկայացված է լճային և գետային նստվածքներով՝ ավազներով, գլաքարերով ու ավազակավերով: Արաքսի հունի թափառման հետևանքով առաջացած Վյուրմյան դարավանդները, որոնք Արաքսի հովտում գտնվում են անընդհատ ճկման տակ, ծածկված են լճային և գետային

նստվածքներով:

Չորրորդական ժամանակաշրջանը հանդես է գալիս 3 դարակարգերով.

- Հետալիոցեն-ստորին պլեյստոցենի ցամաքային նստվածքներ, որոնք ներկայացված են թույլ ցեմենտացած գլաքարերով և կազմում են հին դարավանդների հիմքային մասը: Արաքս գետի հովտում, և դեպի հարավ դրանք ծածկվում են այլովիալ նստվածքներով: Հզորությունը՝ 5-15 մ:

- Միջին-վերին չորրորդական լճային և գետային նստվածքներ, որոնք ներկայացված են ավազակավերով, ավազներով և գլաքարերով: Արարատյան հարթավայրի միջին-վերին չորրորդականի երրորդ և երկրորդ դարավանդների լճապլուվիալ, այլովիալ-պրոլյուվիալ նստվածքների հորիզոնները և Արաքս ու Սևջուր գետերի հնահունային առաջացումները վկայում է Արաքս գետի ինտենսիվ ակումուլյատիվ - էրոզիոն գործունեության մասին: Այս ապարների հզորությունը կազմում է 100-120 մ: Այս նստվածքները հիմնականում ներկայացված են ավազակոպիճներով, ավազներով, ավազային և դիատոմիտային կավերով:

- Վերին չորրորդական հասակի առաջացումներ, որոնք ներկայացված են ժամանակակից նստվածքներով՝ կոպճագլաքարերով, ավազակոպիճներով, ավազներով, ավազակավերով, կավերով, ավազներով և կազմում են ժամանակակից գործող դարավանդները: Արարատյան դաշտավայրի վերին չորրորդականին վերագրվող լճային նստվածքների Արաքս գետի Առաջին վերհունային դարավանդի հորիզոնի հզորությունը հասնում է 20-25 մ: Լճադարավանդային նստվածքները հիմնականում ներկայացված են կոպճագլաքարերով, ավազակոպիճներով, ավազներով, ավազակավերով և կավերով: Այս դարավանդի ավազակոպճագլաքարային նստվածքներին է հարում հետախուզված տեղամասը: Չորրորդական համակարգը եզրափակում են վերին չորրորդական - ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ-պրոսավիալ նստվածքները, որոնք ներկայացված են Արաքս գետի հնահունի ու ճահճային ավազակավային, ավազակոպճագլաքարային և կավավազային առաջացումներով, որոնց հզորությունը հասնում է 1.5-10 մ-ի:

Ժամանակակից այլովիալ նստվածքները ներկայացնում են ժամանակակից գետերի հունային ավազակոպճագլաքարային և կավավազային առաջացումներ, որոնց հզորությանը տատանվում է 1-10 մ-ի սահմաններում:

Խիստ արտահայտված մայրցամաքային կլիման և ռելիեֆի բնույթը նպաստում են շրջանի լեռնային տեղամասի ապարների ինտենսիվ քայքայմանը, սելավային հոսքերով դրանց տեղափոխմանը և նախալեռների երկայնքով ընդարձակ կոների տեսքով ջրաբերուկների կուտակմանը, որոնք հաճախ միաձուլվում են միմյանց մեջ՝ առաջացնելով համատարած խարամներ:

Հարթավայրային տեղամասերում այս տիպիկ պրոլյուվիալ-դեյուվիալ կուտակումները փոխարինվում են Արաքս գետի հովիտի այլովիալ և էյուվիալ նստվածքներով: Շրջանի լեռնային տեղամասերում, հատկապես անդեզիտաբազալտային լավաների տարածման սահմաններում, լայն տարածում ունեն էյուվիալ-դեյուվիալ բեկորային խառնակույտերը:

Ըստ Ա.Տ. Ասլանյանի շերտագրական հաջորդականության մեջ մայրցամաքային և լճագետային առաջացումները ներկայացվում են հետևյալ տեսքով. 210 մ, 110-113 մ, 72- 75 մ, 50-55 մ, 27 մ, 12-13 մ, 2.5-3. 0 մ հարաբերական նիշերում Արաքս գետի հովտում առանձնանում են կուտակումային գլաքարային դարավանդները: Բացի այդ, հստակ արտահայտված է 1000-1200 մ բարձրությամբ հինավուրց համահարթություն՝ ծածկված Ղարսի պլատոյի լավայով: Առաջին երեք դարավանդները բավականին մեծ

թեքությամբ խորասուզվում են դեպի հյուսիս-արևելք:

Դարավանդը 27մ իր վրա է կրում լավային հոսք: Առաջին վերողողահունային դարավանդի բարձրությունը գետի հոսանքով դեպի ներքև մեծանում է և Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում հասնում է 5-6 մ-ի: Վերջինս ժամանակակից տեսքով ներկայացնում է Արաքս գետի հիմնականում առաջին և մասամբ երկրորդ (11- 13 մ) վերողողահունային դարավանդները և կազմված է տարատեսակ ավազակավերից, կավավազներից, ավազներից և մասամբ գլաքարերից: Արևմտյան մասում հովիտի առաջին վերողողահունային դարավանդում կան գոգափոսեր, Արմավիր և Առատաշեն գյուղերի մոտ բարձրանում են հրաբխային կոները՝ ժայթքման կենտրոնները, որոնք կազմված կարմիր խարամներից և մասամբ լիթոիդային տուֆերից:

5.3.1. Տեկտոնիկա

Տեկտոնական տեսակետից տեղամասի շրջանը ընդգրկված է Մերձարաքսյան տեկտոնիկա-մագմատիկական գոտում: Տարածաշրջանի տարածքում առանձնացված են 3 անտիկլինալային և 2 սինկլինալային ծալքեր, որոնք ունեն հյուսիս-արևելյան ուղղություն և արտահայտվում են Արարատյան դաշտավայրի հյուսիսային մասում՝ հիմնականում նեոգենի հասակի նստվածքներում: Դիզյունկտիվ խախտումներից առանցվում են հյուսիս-արևմտյան տարածման 2 բեկվածքներ:

Դիտարկվող շրջանը մտնում է իր կողմից առանձնացված Արաքսի լեռնատեկտոնական գոտու մեջ: Այս գոտին ընդգրկում է Փոքր Կովկասի ներքին աղեղը Միջին Արաքսի ավազանի սահմաններում և բնութագրվում է բացառապես նորմալ նստվածքային ֆացիաների լայնածավալ զարգացմամբ և խորքահատակային զրանիտոիդային ներժայթքումների (ինտրուզիաների) բացակայությամբ:

Գոտու կազմում առանձնանում են երկու տեկտոնական զոնա՝ Երևանյան և Մերձարաքսյան:

Երևանյան մեգասինկլինալային զոնան ձգվում է 30-35 կմ լայնությամբ Թալին-Աշտարակ-Երևան գոտու երկայնքով և սահմանափակվում է Անի-Օրդուբադի ու Երևանյան խորքային խզվածքներով: Ջոնայի ծալքավորումը հստակ-կարճաձև է և կողմնորոշված է գոտու արևմտյան և կենտրոնական սեզմենտներում, կազմված է հիմնականում պալեոգենային և միոցենային նստվածքներից, ուղղությունը՝ հյուսիս-արևել- քից դեպի հարավ-արևմուտք՝ միջին անկյունների տակ զոնայի տարածման հարաբերությամբ, իսկ արևելքում, հարավ-արևելքում՝ քիչ թե շատ զոնային զուգահեռ: Ըստ երկրաբանական հանույթի տվյալների, այս գոտու միոպլիոցենային նստվածքները մերկանում են Արաքս և Ախուրյան գետերի կիրճերում, խիստ տեղախախտված են և առաջացնում են արևելք-հարավ-արևելյան տարածման մի շարք անտիկլինալային և սինկլինալային կառուցվածք:

30-35 կմ լայնությամբ Մերձարաքսյան մեգասինկլինալային գոտին ընդգրկում է ՀՀ սահմաններում Արարատյան դաշտավայրը և Ուրցի լեռնաշղթան ու երկու կողմից սահմանափակվում է Երևանյան և Արարատյան խորքային խզվածքներով: Արևմուտքում այն կտրուկ թեքվում է և Վերին Արաքսի երկայնքով ձգվում է դեպի Արևելյան Անատոլիա, իսկ հարավ-արևելյան ուղղությամբ՝ Արաքսի հովտի երկայնքով շարունակվում է դեպի ք.Նախիջևան և այնուհետև, ք. Ջուլֆայի արևմտյան մասով անցնում է Իրան:

Կառուցվածքային առումով Արարատյան գոգավորության արևմտյան հատվածը դեպի արևելք, հարավ-արևելք բացվող միոցենային նստվածքներից կազմված

մերձլայ- նակի տարածման երկակի անտիկլինորիում է:

Արմավիրի մարզը տնտեսապես զարգացած է: Հատկապես զարգացած է գյուղատնտեսությունը: Այստեղ գերակշռում են բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությունը, խաղողագործությունը և պտղաբուծությունը:

Մարզում գործում են շինաքարերի և երեսապատման քարերի արդյունահանման տուֆերի և բազալտների մի շարք հանքավայրեր: Շրջանը հարուստ է նաև ավազի և ավազակոպճազաքարային խառնուրդի հանքավայրերով (Հոկտեմբերյանի ԱԿԽ-ի խմբի հանքավայրեր՝ Ջանֆիդայի, Արմավիրի, Արգավանդի, Արևիկի, որոնց պաշարները հաստատվել են դեռևս 1964-1966թթ. և վերահաստատվել 1977թ., Արաքսավանի, Վտակի, Ագատավանի, Գետամեջի, Արաքսի, Ռանչպարի, Գետափի, Տանձուտի և այլն, որոնց պաշարները հաստատվել են 2000-2010 թթ. և, որոնք գտնվում են շահագործման մեջ):

5.4. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը

Հանքավայրի Արգավանդ տեղամասը ընդգրկվում է Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճազաքարային խառնուրդի հանքավայրերի մեջ: Բոլոր հանքավայրերի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից ջրաբերուկային նստվածքները, ավազն ու կոպճազաքարերը, ինչպես նաև ուշ չորրորդական հասակի ավազակավային ապարները:

Տեղամասի երկրաբանական կտրվածքները հետևյալն են (վերևից ներքև)։

Ժամանակակից ջրաբերուկներ: Ժամանակակից ջրաբերուկները ներկայացված են հողաբուսական շերտով, ավազակավերով, կավավազներով և կավով: Դրանք ունեն սահմանափակ զարգացում ինչպես ըստ հզորության, այնպես էլ ըստ տարածման:

Ջրաբերուկային նստվածքների հզորությունները տատանվում են 0.0-2.1-2.4մ

Ավազ և կոպճազաքարեր: Ավազը և կոպճազաքարերը հետազոտվող տեղամասերում հանդիսանում են օգտակար սովաբաշերտը:

Տեղամասի ավազն ու կոպճազաքարերը իրենցից ներկայացնում են փխրուն, թեթևակի կարծրացած, չցեմենտավորված նստվածքային ապարներ, տարբեր աստիճանի կոշտավորված լեռնային ապարների բեկորներ և տարբեր կազմության ևճի միներալներ:

Օգտակար հաստաշերտը ներկայացված է տարահատիկ ավազներով և տարբեր մեծության կոպճազաքարերով: Օգտակար հաստաշերտի ամբողջ հզորությամբ հաճախ դիտարկվում է բոլոր տարատեսակների շերտավորում, ինչը պայմանավորված է դրանց առաջացման պայմաններից: Դրանց տեղադրման վերաբերյալ որոշակի օրինաչափություն չի դիտարկվում: Տարբեր չափսի հատիկների և գլաքարերի շերտերի միջև հստակ արտահայտված հպում չի դիտարկվում: Ավազի ու կոպճազաքարերի բոլոր տարատեսակները փխրուն են, սորուն:

Օգտակար հաստաշերտում ոչ հազվադեպ հանդիպում են ավազակավային ապարների 0.1-1.0 մ հզորության առանձին ուպայակաձև ենթաշերտեր, ներկայացված կավավազներով և կավերով:

Այս ենթաշերտերի առաջացումը կապված է գետերի ռեժիմի հետ, որտեղ առաջացել է օգտակար հաստաշերտը:

Հաճախ հանդիպում են ավազի համանման ենթաշերտեր՝ հիմնականում 0.1-

0.9 մ, հազվադեպ մինչև 4.5 մ հզորության գլաքարերի հազվագյուտ բեկորներով:

Օգտակար հաստաշերտի կառուցվածքը պսեֆիտային է (կոպտաբեկորային), պսամո-պսեֆիտային (ավազա-կոպտաբեկորային):

Կազմվածքը անկանոնավորության աստիճանի շերտավոր է:

Կոպճազլաքարերը ներկայացված են կոշտավորված, կլոր, տեղ տեղ օվալաձև, հոծ, որպես կանոն, զրկված տեսանելի ծակոտկենությունից ապարների բեկորներով: Գերակշռում են մոխրագույն կամ մուգ մոխրագույն էֆուզիվ ապարների գլաքարերը, դիտվում են նաև նստվածքային, ինտրուզիվ և փոխակերպային ապարների բեկորներ (գլաքարեր):

Գլաքարերը ակնադիտորեն թարմ են, առանց հողմահարման հետքերի, բացառությամբ խոշորահատիկ ինտրուզիվ ապարների եզակի բեկորների: Կոպճազլաքարերի չափերը տատանվում են լայն սահմաններում, հիմնականում մինչև 80 մմ, բայց հաճախ հանդիպում են մինչև 30-35 սմ չափերի առանձին մեծազլաքարեր:

Կոպճազլաքարերի մակերևույթը մաքուր է, առանց կավի հետքերի, այնուամենայնիվ, նմուշներում դիտվում են կավի գնդեր, որոնք, հավանաբար, կավային ենթաշերտերի բեկորներ են: Ապարների բեկորների քանակը, որոնց կարելի է դասել բոլոր վերցված նմուշներից թույլերի շարքին (մարմար, կրաքար) չեն գերազանցում 2- 3%-ը: Ստորև բերվում է բոլոր հանքավայրերից վերցված կոպճազլաքարերի կազմի մեջ մտնող լեռնային ապարների մանրադիտակային նկարագրությունը:

Բազալտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է ինտերսերտալ հիմնական զանգվածով, ինչը բնութագրվում է պլագիոկլազի լեյստի և միկրոլիթների անկանոն տեղադիրքով, որոնց արանքներում դիտարկվում են սևին մոտ մուգ գորշավուն հրաբխային ապակի, ինչպես նաև ավգիտի հատիկներ և հանքային միներալներ: Պլագիոկլազի լեյստի չափերը 0.03 մմ-ից մինչև 0.3 մմ են, ավգիտային հատիկների չափերը՝ 0.01-0.075 մմ:

Հաճախ հիմնական զանգվածում հայտնաբերվում են հանքային միներալի իզոմետրական հատիկներ: Տեղ-տեղ հիմնական զանգվածը թույլ կարբոնատացված է: Պորֆիրային անջատումները դիտարկվում են ոչ շատ քանակությամբ և ներկայացված են պլագիոկլազով և պիրոքսենով: Պլագիոկլազը ներկայացված է մինչև 0.7մմ չափերի պրիզմայաձև և աղյուսաձև հատիկներով, եզակի հատիկներ ունեն մինչև 3 մմ չափեր: Պիրոքսենը դիտարկվում է մինչև 0.375 մմ չափի կարճապրիզմային հատիկներում: Ներկայացված է ավգիտով: Ապարում ծակոտիները կազմում են 1% և ունեն ձգված տեսք: Ծակոտիների չափերը մինչև 0.9 մմ են (շխֆ 2): Պորֆիրային անջատումները կազմում են մինչև 1%:

Անդեզիտաքազալտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է միկրոլիթային հիմնական զանգվածով, ինչը բնութագրվում է մինչև 0.075 մմ չափերիվ պլագիոկլազի միկրոլիթների անկանոն տեղադիրքով, որոնց արանքներում դիտարկվում են սևին մոտ հրաբխային ապակի:

Պորֆիրային անջատումները կազմում են մինչև 5% և ներկայացված են պլագիոկլազով և պիրոքսենով: Պլագիոկլազը դիտվում է պրիզմայաձև, աղյուսաձև և 0.1-0.9 մմ չափի անկանոն հատիկներում: Հատիկները թարմ են: Պիրոքսենը դիտվում է մինչև 0.2 մմ չափի պրիզմայաձև և կարճապրիզմայաձև հատիկներում: Ներկայացված է ավգիտով: Ծակոտիները կազմում են մինչև 1%, ունեն բավականին իզոմետրական ձև և մինչև 0.2 մմ չափեր:

Անդեզիտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է, միկրոլիթային և հիալոպելիտային հիմնական զանգվածով: Հիմնական զանգվածում դիտարկվում է նաև հանքային միներալի ցան: Պորֆիրային անջատումները կազմում են 1% և ներկայացված են պլազիոկլազով և օպօցիտացված հատիկներով, ինչպես նաև պիրոքսենի եզակի հատիկներով:

Անդեզիտադաշտներ: Ապարի կառուցվածքը մանրահատիկ է, հոծ: Ապարը բաղկացած է հիմնականում պլազիոկլազից, որը գլխավորապես ներկայացված է իրար խիտ հպված միկրոլիթներով:

Մաֆիտային միներալները ներկայացված են պիրոքսենով, որը կազմում է 5%: Ներկայացված է ավգիտով: Ապարում դիտվում են ապատիտի հազվագյուտ հատիկներն հանքային միներալ:

Փոփոխված եղջերախաբային անդեզիտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է, հիմնական զանգվածի պիլոտակսիտային կառուցվածքով: Ապարը կազմված է պլազիոկլազի ներփակվածքներից, եղջերախաբերից և հիմնական զանգվածից, որը ներկայացված է միկրոլիթներով և լեյստերով: Հիմնական զանգվածում երկրորդական միներալներից հայտնաբերված են կալցիտի հազվագյուտ հատիկներ, ինչպես նաև պիրոքսենի նեղ պրիզմաներ: Ամբողջ հիմնական զանգվածը ծածկված է մագնետիտի հանքային միներալի կետային հատիկներով:

Պլազիոկլազի ներփակվածքները առաջացել են մինչև 0.2 մմ չափի նեղպրիզմայաձև ֆենոբյուրեղներից: Պլազիոկլազը որոշվել է որպես անդեզին: Եղջերախաբը ամբողջապես օպացիտացած է, պահպանելով հատիկների միայն բյուրեղագրական ձևը: Հիմնական զանգվածը կազմում է մոտավորապես 65%, իսկ ներփակվածքները՝ 35%, որից 20%-ը գունավոր միներալներն են: Ուղեկից միներալները ներկայացված են մագնետիտով և ապատիտով:

Խարամային ծակոտկեն բազալտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է, հիմնական զանգվածի հիալոպելիտային կառուցվածքով: Կազմվածքը ծակոտկեն է: Ծակոտիները կլորավուն են, օվալաձև, երբեմն նրանք ունեն անկանոն ձև և կազմում են ամբողջ շիֆի մակերեսի 25-30%-ը: Հիմնական զանգվածը կազմված է մուգ գորշավուն խարամացած հիմնական հրաբխային մեգնետազիսից, որում ներթափանցված են պլազիոկլազի միկրոլիթները և պիրոքսենի եզակի մանրահատիկները: Ներփակվածքները ներկայացված են պլազիոկլազով և պիրոքսենի մանրահատիկներով: Հանքային միներալը ներկայացված է մագնետիտով:

Նշաքարային պորֆիրիտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է, հիմնական զանգվածի միկրոլիթային կառուցվածքով: Կազմվածքը նշաքարային է. 0.4-1.5 մմ չափերի նշաքարերը լցված են բյուրեղային կալցիտով: Ապարի հիմնական զանգվածը կազմված է միկրոլիթներից, պլազիոկլազի լեյստաձև հատիկներից, որոնք տեղադրված են անկանոն, անկյունաձև արանքները լցված են քլորիտացած հրաբխային ապակիով: Մանր ներփակվածքները ներկայացված են պլազիոկլազի երկարապրիզմայաձև մասնիկներով, որոնք ամբողջապես տեղակալված են կարբոնատով:

Պլազիոկլազային պորֆիրիտ: Ապարի կառուցվածքը պորֆիրային է, հիմնական զանգվածի միկրոլիթային կառուցվածքով: Հիմնական զանգվածը կազմված է միկրոլիթներից և պլազիոկլազի կարճապրիզմայական հատիկներից, մագնետիտի հատիկներից և քլորիտի թեփուկներից, դաշտային սպաթի գաղտնաբյուրեղային այլաձև ագրեգատից և ջրաթափանց քվարցի հատիկներից: Հանքային միներալները ներկայացված են մագնետիտով: Ուղեկից միներալներից

հայտնաբերվել են մագնետիտի մանրահատիկներ և ապատիտի բարակ ասեղիկներ:

Պիրոքսենիտ՝ Կառուցվածքը մանրահատիկ է: Ապարը հիմնականում կազմված է ավզիտով ներկայացված պիրոքսենի պրիզմայաձև և կարճապրիզմայաձև հատիկներից: Հատիկների չափը մինչև 0.6 մմ է: Ապարը թույլ քլորիտացած է: Դիտվում են նաև թույլ ներկված ամֆիբոլի եզակի հատիկներ, ինչպես նաև մինչև 0.4 մմ չափի հանքային միներալ: Սերպենտինիտ (հնարավոր է սերպենտինացած դունիտ): Ապարի կռուցվածքը թեփուկաթելքավոր է, հանգուցային, զուգահեռ-թելքավոր: Ապարը իրենից ներկայացնում է սերպենտինացած դունիտ, ինչի հետևանքով զարգանում են սերպենտինի թերթաձև և թելքավոր տարատեսակները: Վերջինս առաջացնում է անկանոն հանգուցներով ինչ-որ ցանց, որոնցում տեղակայված են օլիվինի մնացորդային հատիկներ, ամբողջապես փոխարինված քլորիտով: Սերպենտինի թելիկները ներկայացված են քրիզոտիլով, իսկ թերթայինը՝ բաստիտով:

Ապարի աբողջ զանգվածում առկա է ցրված ձևով և առանձին հազվագյուտ հատիկներով հանքային միներալ: Այն ներկայացված է մագնետիտով: Վերջինս լցնում է նաև ապարի ճեղքերը, երբեմն կարբոնատային արգասիքի հետ միասին: Կարբոնատային արգասիքը երբեմն առաջացնում է հետքային կուտակումներ, ընդ որում այդ կուտակումներն ունեն կտրատված եզրագծեր: Հայտնաբերված են նաև միմյանց զուգահեռ տեղադրված կալցիտի նրբերակներ:

Պիրոքսեն-էպիդոտային ապար: Ապարի կառուցվածքը հիպիդոհատիկաձև է: Ապարը կազմված է պիրոքսենից և էպիդոտից: Պիրոքսենը ներկայացված է մինչև 1 մմ, հազվադեպ 1.9 մմ չափի պրիզմայաձև և կարճապրիզմայաձև հատիկներով: Պիրոքսենը ներկայացված է դիոբսիդով: Էպիդոտը դիտարկվում է պրիզմայաձև, մանրահատիկ և երբեմն ճաճանչաձև-ճառագայթային հատիկների տեսքով՝ անբնական կապույտ գունավորմամբ:

Գաբրոդիորիտ: Ապարի կառուցվածքը խոշորահատիկ է:

Ապարը կարբոնատացած է, սերիցիտացած և թույլ քլորիտացած: Մաֆիտային միներալը ներկայացված է եղջրախաբով և պիրոքսենով: Ապարում դիտվում է նաև պլազիոկլազ, կարբոնատ, սերիցիտ և քլորիտ:

Դիորիտ: Ապարի կառուցվածքը հիպիդոհատիկաձև է, կազմված է 70% պլազիոկլազից, ինչպես նաև եղջրախաբից, բիոտիտի և մուսկովիտի եզակի թեփուկներից, կարբոնատի ոչ շատ խառնուրդից, ապատիտի եզակի ասեղանման հատիկներից: Երբեմն դիտարկվում են եղջրախաբի հետ հանքային միներալի բավականին խոշոր առաջացումներ: Հանքային հատիկների չափսերը հասնում են մինչև 8 մմ-ի:

Պլազիոգրանիտ: Ապարի կառուցվածքը հիպիդոհատիկաձև է: Ապարը կազմված է պլազիոկլազից, քվարցից, քլորիտից, էպիդոտից, կարբոնատից, բիոտիտից և հանքային միներալից: Պլազիոկլազը կազմում է մոտ 60-70%-ը, քվարցը՝ 20-25%-ը:

Գրանոդիորիտ: Ապարի կառուցվածքը հիպիդոհատիկաձև է: Ապարը կազմված է 70% պլազիոկլազից, 20% քվարցից, ինչպես նաև քլորիտից, էպիդոտից, սերիցիտից, պատիտից և հանքային միներալից:

Տուֆիտ: Ապարի կառուցվածքը տուֆիտային և փշրաքարանման է: Ապարը կազմված է խառը հրաբեկորային նորմալ-նստվածքային նյութից: Ապարի հիմնական կտորը իրենից ներկայացնում է կանաչավուն երանգավորմամբ, հավանաբար քլորիտի, գունավոր միներալի բավականին նուրբ մասնիկների գաղտնիբյուրեղային ագրեգատ: Այդ կտորի զանգվածում դիտվում է դաշտային սպաթի և քվարցի ալերիտային (մեծությամբ ոչ ավել 0.3մմ-ից) ածխային և անկանոն ձևի

հատիկներ: Ապարը հատված է բազմաթիվ երակիկներով: Վերջիններս, հատվելով միմյանց հետ, առանձնացնում են անկանոն ձևի սուրանկյուն տեղամասեր, որոնք ունեն բեկորների տեսք, ինչը և պայմանավորում է ապարի կեղծփշրաքարային կառուցվածքը: Ապարի տեքստուրան ծակոտկեն է: Մինչև 1.5 մմ չափի ծակոտիները լցված են կանաչ քլորիտի թեփուկներով: Հանքային միներալը հանդիպում է հազվադեպ և ներկայացված է թեթևակի լիմոնիտացած մագնետիտի մանր հատիկներով:

Տուֆի կեղծփշրաքար: Ապարի կառուցվածքը կեղծփշրաքարային է: Ապարը կազմված է տուֆային նյութից (ներծծված երկաթի հիդրօքսիդներով), ինչը ենթարկվել է ապաբյուրեղացման գաղտնաբյուրեղային քվարց-դաշտասպաթային ագրեգատով: Ապարը ճեղքավոր է, ճեղքերը հատվելով միմյանց հետ, առանձնացնում են անկանոն ձևի սուրանկյուն տեղամասեր, որոնք ունեն բեկորների տեսք, ինչը և պայմանավորում է ապարի կեղծփշրաքարային կառուցվածքը: Ճեղքերը լցված են խոշորահատիկ, տեղ-տեղ մանրահատիկ օտարձև քվարցով:

Ավազաքար: Ապարի կառուցվածքը օտարձև է և պսամիտային: Ապարը կազմված է քվարցով, դաշտային սպաթով, ակտինոլիտով, մագնետիտով, բիոտիտի հազվագյուտ թեփուկներով, ապարի բեկորներով կազմված փշրաքարային նյութով: Ապարի ցամաքածին մասը գերակշռում է կարբոնատային նյութով ներկայացված ցեմենտացնող արգասիքից: Ապարի ոռոշ տեղամասերում կարբոնատը լցնում է բեկորային հատիկների մեջ եղած առանձին ծակոտիները, տեղ-տեղ առաջացնելով ծակոտկեն ցեմենտի տեսակ:

Կալիումական դաշտային սպաթը դիտվում է մինչև 0.6 մմ չափի անկանոն ձևի խամրած հատիկներում: Պլագիոկլազի հատիկները բավականին թարմ են, մինչև 0.7 մմ չափի:

Քվարցը դիտվում է մինչև 0.6 մմ խոշոր և թույլ գնդավորված օտարձև հատիկներում և մանր հատիկների կույտերում, որոնք ցեմենտացնում են մնացած նյութերը: Քվարցը բնութագրվում է ջրաթափանց գույնով, ցածր երկբեկմամբ:

Ակտինոլիտը հանդիպում է պրիզմայաձև հատիկներով և կանաչամոխրավուն գույնի անհավասար վերջավորություններով:

Բիոտիտը հանդիպում է թեթևակի քլորիտացման ենթարկված թեփուկների տեսքով: Թեփուկների տեսքով է հանդիպում նաև մուսկովիտը: Մագնետիտը առաջացնում է անկանոն ձևի հատիկներ՝ անդրադարձող լույսի մետաղական մոխրա-գույն փայլով:

Ապարների բեկորները ունեն սահմանափակ տարածում և ներկայացված են միջին հիմնային ապարներով:

Կրաքար: Ապարի կառուցվածքը մանր բյուրեղային է, նուրբ բյուրեղային և հոծ մանրահատիկային, տեղ-տեղ գաղտնաբեկորային: Ապարը կազմված է իրար կիպ հարող կալցիումի կարբոնատի մանր անկանոն ձևի հատիկներից, որոնց ֆոնի վրա դիտվում են նաև կարբոնատի հազվագյուտ նրբերակներ: Հիմնական զանգվածում դիտվում են մինչև 0.2 մմ չափի քվարցի այլաձև եզակի հատիկներ: Ապարում դիտվում է երկաթի հիդրօքսիդի ոչ շատ խառնուկ:

Մերգելային կրաքար: Ապարի կառուցվածքը գաղտնիբյուրեղային է: Ապարը կազմված է գաղտնիբյուրեղային կալցիտից, որի հատիկների չափերը չն գերազանցում մմ-ը: Ապարը ինտենսիվ ներծծված է կավային արգասիքով:

Բեկորային կրաքար: Ապարի կառուցվածքը կեղծփշրաքարային է: Ապարը իրենից ներկայացնում է բեկորային կրաքար, որը հատված է բազմաթիվ

նրբերակներով: Կրաքարի բեկորները շրջանաձև են՝ ըստ երկարության մինչև 0.6-0.7մմ տրամագծով: Դրանք կազմված են կալցիտի գաղտնիբյուրեղային մասնիկներից, որոն շատ ինտենսիվ ներծծված են կավային նյութով: Ապարը հատող նրբերակները կազմված են կալցիտի անհավասարաչափ հատկներից: Հազվադեպ նրբերակները ներծծված են երկաթի հիդրօքսիդով:

Կրաքարային ալերոլիթ: Ապարի կառուցվածքը ալերոլիթային է: Ապարը կազմված է քվարցով, հանքային միներալով և քլորիտի տերմներով ներկայացված մինչև մմ չափի բեկորային հատիկներից: Ցեմենտացնող զանգվածը ներկայացված է կավային մասնիկների պարունակությամբ գաղտնիհատիկավոր կալցիտով: Ցեմենտի տեսակը բազալտային է:

Մարմարացած կրաքար: Ապարի կառուցվածքը գրանոբլաստային է, անհավասարաչափ հատիկավոր: Ապարը կազմված է միմյանց կիպ հարող կալցիտի հատիկներից: Տեղ-տեղ կալցիտը առաջացնում է ալիքային հանգամաբ սյունաձև, իզոմետրական, զուգահեռ-թելքային ագրեգատներ: Տեղ-տեղ դիտվում է հանքային միներալի խառնուկ:

Քվարցիտ: Ապարի կառուցվածքը հոծ է, անհավասարաչափ հատիկային: Ապարը կազմված է առավելապես քվարցից, որը դիտվում է 0.075-0.3 մմ (լայնակի) չափի անգույն, թարմ հատիկներում: Ապարում դիտվում են նաև կալիումի դաշտային սպաթի, էպիդոտի, պիրոքսենի, ինրպես նաև հանքային միներալի եզակի հատիկներ: Երկրորդական միներալներից առկա են երկաթի հիդրօքսիդը և քլորիտը:

Փոխակերպային պիրոքսեն-պլագիոկլազային պորֆիրիտ: Կառուցվածքը պորֆիրաբլաստային է՝ հիմնական զանգվածի երկրորդական կառուցվածքի հետ: Հիմնական զանգվածը կազմված է առատ միկրոլիթներից և պիրոքսենի նեդաբիզմայական հատիկներից: Փոխակերպային գործընթացների հետևանքով կառուցվածքը և միներալային կազմը նկատելի փոփոխվել է:

Պորֆիրային անջատումները, որոնք ներկայացված են պիրոքսենով (առատ) և պլագիոկլազով, կորցրել են իրենց բյուրեղագրական ձևերը, մասնատված են, վերածված են իզոմետրական ավելի մանր հատիկների, որոնք առաջացնում են զլոմերպորֆիրային կուտակումներ: Մի կետում կուտակված պլագիոկլազային և պիրոքսենային հատիկները ապաբյուրեղացված են:

Գունավոր միներալները կազմում են ապարի զգալի մասը: Ապարի ամբողջ զանգվածը ներծծված է անթափանց կավապելիտային նյութով, ինչի հետևանքով միներալային կազմը մի քիչ դժվար է որոշել:

Քվարց-դիորիտային կազմի մերձհպումային փոփոխված ապար. Ապարի կառուցվածքը լրիվ բյուրեղային է, որոշ տեղամասերով հիպիդոհատիկաձև (սկզբնական կառուցվածք): Մերձհպումային կերպափոխության ազդեցության տակ, ապարի կառուցվածքը և ամբողջ տեսքը փոփոխված է: Ապարի բաղադրությունը կազմող միներալները, ներկայացված են պլագիոկլազով, քվարցով, կալիումային դաշտային սպթով, եղջերախրով: Միներալների պարունակությունը հետևյալն է. պլագիոկլազ-50%, քվարց-30% (քվարցի բարձր պարունակությունը բացատրվում է հպումային կերպափոխությամբ), գունավոր միներալները՝ 20%:

Ջրաջերմային փոփոխված խարամացած, կայծքարացած ապար: Ապարի կա-ռուցվածքը կեղծփշրաքարային է: Ապարը իրենից ներկայացնում է բազմաթիվ երակիկներով հատված խարամացած կայծքար: Վերջիններս, իրար մեջ հատվելով, առաջացրել են անկանոն ձևի սուրանկյուն տեղամասեր, որոնք ունեն բեկորների տեսք, ինչը պայմանավորում է ապարի կեղծփշրաքարային կառուցվածքը:

Մուրանկյուն տեղամասերը խիստ ներծծված են օքսիդացված հանքային միներալով և պարունակում են 0.01-0.02 մմ շատ մանր գնդաձև առաջացումներ, որոնք չունեն ներքին կառուցվածք: Այս գնդաձև առաջացումները ներկայացված են քվարցով:

Հաճախ հանքային միներալը գնդաձև առաջացումների շուրջը առաջացնում է բարակ թաղանթ, որոնց կենտրոնը նույնպես հազվադեպ լցված է հանքային միներալով:

Ապարը հատող երակիկները կազմված են հատիկավոր քվարցից, կալցիտից և հազվադեպ քլորիտի շատ մանր թեփուկներից: Քվարցային հատիկները երակներում շատ խիստ ջարդոտված, վերաբյուրեղացած են, տեղ-տեղ երակիկները լցված են բացառապես կալցիտով: Ավազները ներկայացված են հոծ ապարների առավելապես գնդավորված հատիկներով և բարակ կամ փոշենման ֆրակցիաների ոչ էական խառնուկի միներալներով:

5.5. Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը մտնում է տաք կլիմայական գոտու մեջ և ունի շոգ ամառով և ցուրտ անհողմային ձմեռով խիստ մայրցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է $+41^{\circ}\text{C}$, իսկ նվազագույնը՝ -310C : Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 260մմ: Ջյան ծածկույթի հաստությունը հասնում է 42սմ, ճնշումը՝ 92 կգուժ/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70սմ (մ/կ Արմավիր):

Ստորև՝ աղյուսակներով (4-7) ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները, որոնք պետք է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում:

Աղյուսակները լրացված են ըստ «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇ II-7.01.-2011» տեղեկագրում առկա «Արմավիր» օդերևութաբանական կայանի կլիմայական տվյալների:

Աղյուսակ 4.

Օդի ջերմաստիճանն՝ ըստ “Արմավիր” օդերևութաբանական կայանի դիտարկումների, °C

Բնակավայր	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20.0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Աղյուսակ 5.

Օդի հարաբերական խոնավությունն՝ ըստ “Արմավիր” օդերևութաբանական կայանի դիտարկումների, %

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավություն, %															
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջինը ժամը 13-ին		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա	
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29	

Աղյուսակ 6.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթն՝ ըստ «Արմավիր» օդերևութաբանական կայանի դիտարկումների

Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ, մմ		
Ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնա- ծածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92
19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42			

Աղյուսակ 7.


Քամիներ՝ ըստ «Արմավիր» օդերևութաբանական կայանի դիտարկումների

Բնակավայր/օդ- կայանի անվանում	Միջ. տար. մթն. ճնշում (հՊա)	Ամիսներ	Կրկնելությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմ. կրկնելություն, %	Միջ. ամսական արագություն, մ/վ	Միջ. տարեկան արագություն, մ/վ	Ուշեղ քամիներով օրերի թիվ	Հաշվարկային արագությունը, որը հնարավոր է 1 անգամ տարիների ընթացքում		
			Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-արլ	Հվ	Հվ-արմ	Արմ	Հս-արմ					20	50	100
			Արմավիր	917.0	հունվա ր	7	5	17	8	9					8	28	18
2.2	2.2	1.9				1.9	1.8	2.3	2.5	2.8							
ապրիլ	5	7			28	11	9	9	20	11	52	1.3					
	2.8	3.4			2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7							
հուլիս	3	8			31	16	11	7	16	8	55	1.1					
	2.1	2.5			1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6							
հոկտեմ բեր	5	4			23	16	9	7	22	14	72	0.6					
	2.2	2.8			1.9	2.9	2.8	3.6	1.3	3.8							

5.6. Շրջանի սեյսմիկ բնութագիրը

Սեյսմատեկտոնական տեսանկյունից հանքավայրը գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում:


Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի (նկ. 6), նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.3g$ և տարածքն ունի մինչև 9 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:



Նկար 6: ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

Հանքավայրի շրջանում սողանքներ կամ քարաթափումներ գոյություն չունեն: Տեղանքի հարթ ռելիեֆը բացառում է դրանց առաջացումը:

Նկ. 7-ում ներկայացված է ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների քարտեզի այն հատվածը, որի տարածքում գտնվում է հայցվող հանքավայրը:



Նկ.7: Հատված ՀՀ առավել վտանգավոր սողանքների քարտեզից (Մ1:200000): Վերցված է Ա.Փանոսյանի և Է.Խարազյանի «2007-2010 թթ. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների ամփոփագրի կազմման աշխատանքների» հաշվետվությունից, 2010թ.: «Երկրաբանական ֆոնդեր» ՊՈԱԿ, ինվենտար համար 6695:

5.7. Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Հանքավայրի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ բացակայում են գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անսրոպոզեն զգալի ազդեցություն:

Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Արգավանդ համայնքն իր տեղադիրքով մոտ է մայրաքաղաք Երևանին, որտեղ գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

Որոշակի պատկերացում հանքավայրի տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից (աղ.8):

Աղյուսակ 8.

**Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների
կախվածությունը բնակչության քանակից**

Բնակչության քանակը, հազ.	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները(մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօք սիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Հաշվի առնելով, որ հանքավայրի տարածքին ամենամոտ գտնվող բնակավայրերն են Արգավանդը և Տանձուտը, ապա հաքնքավայրի տարածքի համար կարելի է դիտարկել հետևյալ ցուցանիշները. փոշի՝ 0,2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0,4 մգ/մ³:

5.8. Ջրային ռեսուրսներ

Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատյան ջրավազանում, որտեղ առկա են հետևյալ ջրերի տիպերը՝ աղբյուրի, գրունտային և ճնշումային: Աղբյուրի ջրերի կոլեկտորներ են հանդիսանում ճեղքավորված աղեզիտաբազալտները: Ստորերկրյա ջրերի տարածման շրջանում ընդգրկված է Մեծամոր գետի ավազանը, Հրազդան գետի ներքևի հոսանքը և Քուռ-Արաքսի մերձափյա գոտին: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճագետային զոյացություններին և ճաքճքված անղեզիտա-բազալտներին, որոնց սնուցումն իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք):

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50հա մակերես, ունի 2մ խորություն, ձագարածև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն (Սևջուր) է, որը սկիզբ է առնում Այդր լճից:

Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և հարավարևելք գնահատվել է համապատասխանաբար «վատ» (5-րդ դաս) և «անբավարար» (4-րդ դաս), իսկ Ռանչպար գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արարատյան դաշտի (որի մեջ մտնում է Արմավիրի տարածաշրջանը) հիդրոերկրաբանական պայմանները բավականին բարդ են: Ստորգետնյա ջրերի հաշվեկշռում մասնակցում են տարբեր տիպի ջրեր. աղբյուրների, հանքային, ստորգետնյա, գրունտային և ճնշումային (արտեզյան և ենթարտեզյան):

Հանքավայրի շրջանի տարածքում հանդիպում են գրունտային ջրեր: Նրանք

պատկանում են այլուվիալ-դելյուվիալ, պրոյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Նրանք տարածքում հիմնականում հանդիպում են 6-7մ խորության վրա, իսկ տեղ-տեղ մինչև 5-6մ-ը: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին: Գրունտային ջրերի ելքը հանքավայրի տարածքում կազմում է 0.3-0.4լիտր/վրկ:

Տեղանքը հարթ է, գտնվում է 853մ բացարձակ նիշի սահմաններում: Մակերևույթը չոր է, սակայն մոտակայքում ռելիեֆի փոփոխություն կան բազմաթիվ լճակներ և ճահճուտներ:

Ավազի արդյունահանումից հանքավայրի տարածքը ջրավորվելու է: Գրունտային ջրերը կներծծվեն և հավաքվելով կառաջացնեն լճակ ինչպես մոտակայքում հաճախ կարելի է հանդիպել:

Լճակի մակերեսը կլինի մոտ 5հա, խորությունը մինչև 5մ: Մոտավոր հաշվարկներով բացահանքում կուտակվելու է 250.0հազ.մ³ ջուր:

Գոլորշացումն ու ջրառը հնարավորություն կտան լճակի ջրերը մշտապես պահել շարժման մեջ, ինչի արդյունքում կկանխվի ճահճացումը: Ջրի բալանսը պահպանվելու է գրունտային ջրերի ինֆիլտրացիայի շնորհիվ:

Քանի որ բացահանքն ունենալու է մինչև 5 մ խորություն, ավազի արդյունահանումը որևէ կերպ չի կարող ազդել Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների վրա:

5.9. Կենդանական աշխարհ

Արմավիրի մարզի տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սիստորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Սակայն այստեղ հանդիպում են նաև արտագոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ: Մարզի տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Հանքավայրի շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից գրանցվել են նապաստակ, աղվես, գայլ: Նախատեսվող գործունեության տարածքում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է:

5.10. Բուսական աշխարհ

Այս տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում, որտեղ տարածված են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները՝ օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով, ինչպես նաև ավազակավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով (նկ.8):


Արմավիրի մարզի տարածքում հանդիպում են ՀՀ բուսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- Մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi* Matschie) - տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable 14e» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ B1a+2ab(iii):

- Գանգրափետուր հավալուսն (*Pelecanus crispus* Bruch) - հազվագյուտ, կրճատվող թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2ce+3ce+4ce» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

- Սպիտակաձակատ սագ (*Anser albifrons* (Scopoli, 1769)) - չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

- Կալախոտ կասպիական (*Kalidium caspicum* (L.) Ungern-Sternb., նկ.9) – վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:



Նկ. 8: Բուսական հիմնական տիպերի տարածման քարտեզ (հատված ՀՀ Ազգային ատլասից)



Նկ.9: Կալախոտ կասպիական (*Kalidium caspicum* (L.) Ungern-Sternb.)

Պետք է փաստել, որ հանքավայրի և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը՝ լանդշաֆտը դեգրադացված է և տարածքներն օգտագործվում է ընդերքօգտագործման աշխատանքների համար:

5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից հանքավայրին ամենամոտ գտնվողը «Ռոդան կարմիր» պետական արգելավայրն է, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը: Այն կազմավորվել է 1987թ., ՀՀ Արմավիրի մարզում ունի 219.85 հա տարածք՝ տեղակայված լինելով Արարատյան դաշտում Արգավանդ, Արագափ և Ալաշկերտ գյուղերի միջև, ծովի մակարդակից 900-950 մ բարձրություններում:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

- արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության
- բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.
- Արարատյան հարթավայրի աղուտային (հալոֆիտ) ցուցանմուշային
- Էկոհամակարգերի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.
- արգելավայրի վայրի բուսական և կենդանական աշխարհի էկոլոգիական միջավայրի պահպանությունը.
- Հազվագյուտ ու անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.
- գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջություն իրականացնելու համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը:

Արգելավայրի Արագափ տեղամասը գտնվում է հանքավայրի հայցվող

տարածքից մոտ 7կմ հեռավորության վրա:

5.12. Հողային ծածկույթ


Հանքավայրի տարածաշրջանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ սննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավագոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են, քանի որ օգտագործվում է ընդերքօգտագործման աշխատանքների համար՝ նախկինում և ներկայումս շահագործվող հանքավայրերի առկայություն: Այդ տարածքներում ընդհանուր առմամբ բացակայում է բուսածածկը, տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթն աչքի է ընկնում հումուսի չնչին պարունակությամբ (1-1.5%) և քարքարոտությամբ:

Հանքավայրի շրջանում զարգացած են հիմնականում ոռոգելի մարգագետնային գորշ, գետադարավանդային, կիսաանապատային գորշ և աղուտ-ալկալի հողատիպերը (նկ. 10) իսկ բուն հանքավայրի տեղամասում աղուտ-ալկալի մարգագետնային սողասուլֆատաքլորիդային հողեր են (քարտեզի վրա համարակալված է 58 թվով):

Ոռոգելի մարգագետնային գորշ հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի 800-950մ բարձրության սահմաններում, ինչպես մարդու դարավոր գործունեության, այնպես էլ գրունտային ու մակերեսային խոնավության համատեղ ներգործության պայմաններում, որոնց ընդհանուր տարածքը կազմում է 53 հազ.հա: Այդ հողերի համար բնորոշ է թույլ հումուսայնությունը (1.5-2.0%) և կարբոնատայնությունը (3-7%), հիմնային ռեակցիան (рН 8.2-8.5), միջին կլանման ծավալը (30-40 մգ.էկվ/100 գ) և բավարար ֆիզիկական հատկությունները: Հողերը հարուստ են ընդհանուր ֆոսֆորով (0,19-0,50%), և կալիումով (1.3-2.07%), սակայն աղքատ են ընդհանուր ազոտով (0.06-0.16):

Գետահովտադարավանդային հողեր: Գոյացել են գետերի հովիտներում, այդ հողերին բնորոշ են հումուսի ցածր (1-2%) պարունակությունը, զգալի է կլանված մագնեզիումի պարունակությունը, Р Н 6.9-8.1, կլանման ծավալը՝ 14-35մգ/էկվ:

Աղուտ-ալկալի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի խոնավ և գերխոնավ հատվածներում, որտեղ գրունտային ջրերը հանքայնացված են և գտնվում են երկրի մակերեսից 0,5-2.5 մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արարատյան հարթավայրում կազմում է 24հազ. հա: Դրանք բնութագրվում են ուժեղ աղակալվածությամբ (1-3%), կարբոնատների զգալի պարունակությամբ (10-16%), բարձր ալկալիացվածությամբ (25-80%), որոնց յուրացումը կարող է իրականացվել միայն քիմիական մեխորացման ճանապարհով: Այս հողերն ընդգրկված են համայնքների այլ հողերի կազմում, որոնք հիմնականում չեն օգտագործվում:



Նկ. 10: Հանքավայրի շրջանի հողատիպերի քարտեզ՝ ըստ ՀՀ ազգային աստլասի

Կիսանապատային գորշ հողերը տարածված են Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու 950-1250 մ բաձրության սահմաններում: Արարատյան հարթավայրում նրանց տարածքը կազմում է 152 հազ. հա: Այդ հողերի համար բնորոշ է հումուսային հորիզոնների փոքր հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի թույլ հումուսայնությունը (1.5-2.0 %), բարձր կարբոնատայնությունը (6-30%), հիմնային ռեակցիան (pH 7.8-8.3), միջին կլանման ծավալը (20-30 մգ.էկվ/100գ) և փոշիացած կառուցվածքայնությունը: Կիսանապատային գորշ հողերը հարուստ են կալիումով՝ 45- 67 մգ/100գ, ֆոսֆորով՝ 3.7-4.2 մգ/100գ և աղքատ են ազոտով՝ 1.4-2.1 մգ/100գ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև

կավավազային մեխանիկական կազմով:

Բուն հանքավայրը գտնվում է աղուտ - ալկալի մարգագետնային գորշ հողատեսքերի շրջանում: Հանքավայրից հյուսիս-տարածված են կիսաանապատային գորշ խճաքարային տեղ տեղ կարբոնատային ցեմենտացված, կիսաանապատային գորշ տիպիկ կոպճային և կիսաանապատային գորշ բերվածքային հողատեսքերը: Հանքավայրից արևմուտք և հարավ-արևմտյան շրջաններում մինչև Արաքս գետը տարածված են ոռոգելի մարգագետնային և մնացորդային մարգագետնային հողատեսքեր: Նման հողատեսքեր տարածված են նաև հյուսիս-արևելյան շրջաններում:

Աղուտ – ալկալի հողերն ունեն սողային, սուլֆատ-սողային և քլորիդ-սուլֆատային քիմիական կազմ: Թույլ հումուսացված են, օժտված են բարձր հիմնայնությամբ և միջինից ծանր մեխանիկական կազմ: Դրանք առաջանում են կիսաանապատային և անապատային գոտիներում, որտեղ գոլորշացումը գերազանցում է տեղումների քանակին, և ստորերկրյա ջրերի բնական հոսքը թույլ է:

Վերջին 30 տարիների ընթացքում Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի մակարդակը նվազել է 1.5-2 մետրով, ինչի արդյունքում հնարավորություն է ընձեռնել բարելավելու աղուտ-ալկալի հողատեսքերը քիմիական և բնական ջրավազման եղանակով: Ջրավազագատման ժամանակ հեշտ լուծվող աղերն ու նոր առաջացած միացությունները հողից հեռացվում են ցամաքորդային ցանցով, և առաջացած գիպսը նպաստում է հողբարելավմանը: Հողի հիմնային ռեակցիայի չեզոքացման հետևանքով մեծանում է կալցիումի և մագնեզիումի կարբոնատների լուծելիությունը, որոնց իոնները նույնպես նպաստում են հողբարելավմանը:

Նախատեսվող գործունեության շրջանակներում օգտակար հանածոյի արդյունահանման ենթակառուցվածքների (բացահանքեր, արտադրական հրապարակ) ստեղծման արդյունքում ժամանակավորապես օտարվելու է մոտ 5 հա տարածք:

Երկրաբանական ուսումնասիրությունների տվյալների համաձայն նախատեսվող գործունեության տարածքում օգտակար հանածոյի մարմինը ծածկող ապարների ծավալը շուրջ 23.0 հազ.մ³ է, որից մոտ 10.0 հազ.մ³ -ը հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) ծավալն է:

Հանքավայրի ամբողջական շահագործումից հետո կատարվելու է ռելիեֆի վերականգնում: Վերականգնման աշխատանքների վերաբերյալ մանրամասները ներկայացված են Հանքի փակման ծրագրում:

Շրջակայքի հողայի ծածկույթի վրա որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում է արտադրական հրապարակի տարածքի աղտոտումը նավթամթերքներով, որը կմեղմացվի շինարարական լավ պրակտիկայի կիրառման և ԲԿՊ-ով ամրագրված մեղմացնող միջոցառումների իրականացման շնորհիվ:

Ըստ կադաստրի պետական կոմիտեի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի սեփականություն հանդիսացող 04-092-0069-0001 ծածկագրով հողամասի սահմաններում, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Հանքավայրի տարածքի ռելիեֆը գտնվում է բնականոն վիճակում, ռելիեֆի խախտում չի արձանագրվել: Լեռնային զանգվածի կամ հողի կուտակում հայցվող տեղամասում առկա չէ:

Հանքավայրի տարածքում հողերն աղտոտող աղբյուրներ առկա չեն, դրանք գտնվում են ելակետային իրադրությունում:

5.13. Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ և Տանձուտ գյուղերում որպես ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակութի անշարժ հուշարձան, նշվում են երկու գյուղում առկա հուշարձանները՝ նվիրված երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին, ինչպես նաև Տանձուտ գյուղում գոյություն ունեցող 10-13 դարերի գերազմանատունը (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55737>, ՀՀ Կառավարության որոշում N 385-Ն, 15.03.2007թ.), որոնք սակայն գործունեությա տարածքի հետ որևէ առնչություն չունեն և գտնվում են գյուղերի բնակելի ակտիվ գոտում:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը՝

ՀՀ Արմավիրի մարզում են գտնվում բնության հետևյալ հուշարձանները.

- «Մեծամոր» լիճ ջրագրական հուշարձանը, որը գտնվում է Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք,

- «Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն» կենսաբանական հուշարձանը, որը գտնվում է Վաղարշապատ քաղաքում, Զվարթնոց տաճարի մոտ,

- «Զրաճահճային բուսականություն» կենսաբանական հուշարձանը, որը գտնվում է Մեծամոր լճի տարածքում:

Հանքավայրը գտնվում է նշված հուշարձաններից առնվազն 9 կմ հեռավորության վրա, ուստի հանքավայրի շահագործման ընթացքում վերոհիշյալ հուշարձանների վրա բացասական որևէ ազդեցություն չի ակնկալվում:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ -ի կողմից տրամադրված եզրակացության համաձայն հայցվող տեղամասի շրջանում պատմամշակութային հուշարձաններ չեն արձանագրվել, տարածքը զուրկ է պատմամշակութային միավորներից, ծրագրի իրականացումը հնագիտական և պատմամշակութային առումով ռիսկեր և խոչընդոտներ չունի (տեքստային հավելված 1):

5.14. Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանները

Հոկտեմբերյանի խմբի ավազի և կոպճազլաքարերի հանքավայրերի հիդրոերկրաբանական պայմանները ուսումնասիրվել են երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում և, հիմնականում, հանգել են լեռնային ապարներում և հորատանցքերում ստորգետնյա ջրերի առկայության ստուգմանը: Որոշված է ստորգետնյա ջրերի մակարդակը, նրանց տատանման ամպլիտուդը, ինչպես նաև հաշվված է մոտավոր դեբիտը ըստ տեղամասերի:

Արարատյան դաշտի (որի մեջ մտնում է Արմավիրի տարածաշրջանը) հիդրոերկրաբանական պայմանները բավականին բարդ են: Դաշտավայրի ստորգետնյա ջրերի հաշվեկշռում մասնակցում են տարբեր տիպի ջրեր. աղբյուրների, հանքային, ստորգետնյա, գրունտային և ճնշումային (արտեզյան և ենթարտեզյան):

Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերը վերագրված են նույնանուն միջլեռնային գոգավորությանը, որը հիմնականում լցված է ստորին չորրորդական հասակի լճագետային նստվածքներով, որոնք էլ ներկայացված են մեծազլաքարային առաջացումների, ավազի, ավազակավերի և կավերի բազմակի հերթափոխությամբ:

Ավագանի մակերեսի մեծ մասում, լճային հաստաշերտի հիմքում տեղադրված է դոլերիտային լավաների ծածկույթը, որն, իր հերթին, տեղակայված է միոցենի և պալեոգենի ծալքավոր նստվածքների ողողահարված մակերևույթին:

Գոգավորության ձգվածությունը ըստ առանցքի երկարության 150 կմ է, առավել-լազույն լայնությունը մոտ 50 կմ է, բացարձակ բարձրությունը 798-900 մ սահմաններում է:

Լճագետային նստվածքների հաստաշերտը ընդհանուր առմամբ ունի ուսպնյակաձև տեսք և հասնում է մինչև 400 մ առավելագույն հզորության:

Հաստաշերտի կազմում առանձնանում է ջրատար մեծազաքարային և ավազային հորիզոնները, որոնք բաժանված են ջրամերջ լճային կավերի, ավազակավերի հորիզոններով և տեղ-տեղ շերտադարսված չորրորդական լավաներով ու տուֆերով:

Ավագանի սնումը իրականացվում է անմիջականորեն Արաքս, Վեդի, Գառնի, Հրազդան, Քասախ, Մաստարա և Ախուրյան գետերի հուններով, ինչպես նաև ծածկերի և հոսքերի տակ թաղված ճեղքավոր լավաների հին գետային ցանցով:

Ըստ Ա. Օհանյանի տվյալների, Արարատյան գոգավորության ջրհավաք ավագանի ընդհանուր մակերեսը հավասարվում է մոտ 7200 կմ², միջին տարեկան տեղումների քանակը ջրահավաք ավագանում՝ մոտ 510 մմ, տեղումների ընդհանուր քանակի ծավալը մոտ 3500 մլն. մ³ է, գետերի և աղբյուրների հոսքը՝ 1500 մլն. մ³, տնտեսության կարիքների համար օգտագործված ջրերի քանակը 1.5 մլն. մ³ և այլն:

Ըստ Ա. Օհանյանի հաշվարկների, տարեկան մնացորդում մնում է մոտ 470 մլն.մ³ ջուր, որը կարող է սնել ջրահավաք ավագանը:

Դաշտավայրի լեռնային հատվածում ապարների մեջ մտած մթնոլորտային և կուտակված ջրերը, ներծծվելով ապարների ճեղքերի, ծակոտիների և դատարկությունների մեջ, կախված դրանց լիթոլոգիական կազմությունից, առաջացնում են մի շարք ջրատար հորիզոններ՝ առանձնացված ջրամերժ հորիզոններով: Հորիզոնական տեղախախտումների (տեկտոնական ճեղքեր, տարեջք) և կարստային երևույթների շնորհիվ, ստորգետնյա ջրերը առաջացրել են վերընթաց և վարընթաց ջրահոսքեր, որոնք դուրս են գալիս հիմնականում դաշտի արևելյան ծայրամասերի մակերևույթում՝ աղբյուրների տեսքով:

Աղբյուրների ջրերի հավաքարանը հանդիսանում են Արագած լեռան խիստ ճեղքավորված անդեզիտաբազալտները:

Ստորգետնյա ջրերի սնման և տեղափոխման համար կարևոր նշանակություն ունի շրջանի տեկտոնական կառուցվածքը այնքան ժամանակ, մինչև նրանք ստիպված են հետևելու առերիչ հավաքարանների (ճեղքեր, տարեջք և այլն) ուղղությանը: Դեպի կուտակիչ ապարներ ստորգետնյա ջրերի անցման ընթացքում, դրանք արդեն բաշխվում են այդ ապարների կազմության և տեղադրման պայմաններին համապատասխան և ձեռք են բերում արտեզյան և մերձարտեզյան բնույթ:

Ստորև բերվում է ջրերի տեսակների համառոտ բնութագիրը.

➤ **Վերնագետնաջրեր և գրունտային ջրեր:** Վերնագետնյա ջրերի առաջացումը ոչ մեծ մակերեսներում, սովորաբար, հանդիսանում է ժամանակավոր երևույթ, որը տեղի է ունենում անձրևների ընթացքում, գետերի վարարման ժամանակ և գրունտային ջրերի մակարդակի բարձրացման հետևանքով:

Գրունտային ջրերը տեղադրված են Արարատյան դաշտի կուտակումների ամենավերին հորիզոնում: Դաշտի առանձին տեղամասերում գրունտային ջրերը գտնվում են մակերևույթին մոտ և շփվում են վերնագետնաջրերի հետ: Դրա

արդյունքում նրանց բաժանումը միմյանցից անհնարին է:

Դաշտի կենտրոնական մասում դիտարկվում է գրունտային ջրերի երկու հորիզոն: Տեղ-տեղ այս գրունտային ջրերը, լավ ջրաթափանց ապարների բացակայության հետևանքով, շփվում են միմյանց հետ: Այս հորիզոնների գրունտային ջրերը վերագրված են մեծազաքարային առաջացումներին, նրանց հողային հատվածին:

Գրունտային ջրերի տատանման ամպլիտուդը հասնում է մինչև 3 մ, ինչը խիստ կապված է օդերևութաբանական ռեժիմի հետ:

Մերձարտեզյան ջրեր

Հայկական ԽՍՀ Երկրաբանական վարչության կողմից Արարատյան դաշտի կենտրոնական մասում հորատված հորատանցքերի տվյալների համաձայն, կան երկու մերձարտեզյան ջրատար հորիզոններ: Դրանցում ջրի մակարդակը տատանվում է հորատանցքի վերին մակարդակից 0.8-ից մինչև 8.0 մ սահմաններում:

Այս ջրերը վերագրված են ավազների և ավազակավերի հերթագայվող շերտերով և ոսպնյակներով այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքների առավել երիտասարդ հա- մալիքին:

➤ Արտեզյան ջրեր

Արարատյան դաշտում հայտնի են արտեզյան ջրերի յոթ հորիզոններ, որոնք տարբեր տեղերում բացված են հորատանցքերով: Դրանցից ամենահզորը հանդիսանում է առաջին հորիզոնը, որը տարածված է հարթավայրի ամբողջ կենտրոնական մասով և ներկայումս շահագործվում է: Մնացած հորիզոնները բացված են 96-286 մ խորության վրա և վերագրված են տարբեր ապարների:

Ավազի և կոպճազաքարերի տեղամասերը տեղակայված են Արաքս գետի հին հունի վրա և գտնվում է նրանից 4.5 կմ-ի վրա: Գտնվելով այդքան մոտ հեռավորության վրա, Արաքս գետը չէր կարող չազդել տեղամասերի գրունտային ջրերի ռեժիմի վրա, և տարվա տարբեր եղանակներին այն արտահայտվում է տարբեր ձև:

1926-1934թթ. ժամանակահատվածում ՀԱՅՁՈՒՐՏՆՏ ինստիտուտի կողմից անցկացված մի շարք դիտարկումների հիման վրա կարելի է փաստել հետևյալը.

1. Գրունտային ջրերը առավելագույն վիճակի են հասնում ապրիլ ամսին, իսկ նվազագույն՝ հոկտեմբերին:
2. Գրունտային ջրերի տատանման ամպլիտուդը միջինում հավասար է 1.0-3.0 մ:

«ՀԱՅՁՈՒՐՏՆՏ» ինստիտուտի նյութերի հիման վրա Վ.Ֆ. Չախարովի կողմից կազմվել են գրունտային ջրերի հիդրոդինամիկ և խորության տեղադիրքի քարտեզները հոկտեմբեր, հունվար, ապրիլ և հուլիս ամիսներին (բացարձակ նիշերով յուր. 0.5մ):

Դիտարկելով նշված քարտեզները, նկատվում է, որ ապրիլ ամսին որոշ տարածքներ լցված են Արաքս գետի ջրերով և գրունտային ջրերի մակարդակը 1.0 մ-ից քիչ է: Այս ժամանակահատվածը, ինչպես նշվել է վերևում, հանդիսանում է գրունտային ջրերի առավելագույն կանգի ժամանակահատված:

Հոկտեմբեր ամսին դիտվում է լրիվ հակառակ պատկերը. գետերի վարարում արդեն չկա և մակերեսի մեծ մասում գրունտային ջրերի մակարդակը 1-ից մինչև 2-3 մ է:

Հուլիսի և հունվարի քարտեզները բնութագրվում են գրունտային ջրերի միջին վիճակով. Առաջինը՝ միջին ամառային, երկրորդը՝ միջին ձմեռային:

Գրունտային ջրերի բարձրացումը մարտին բացատրվում է հենց դաշտավայրում ձյան հալմամբ: Գրունտային ջրերի մակարդակի ընդհանուր բարձրացումը պայմանավորված է տեղումների քանակի ավելացմամբ և գոլորշիացման նվազմամբ:

Ապրիլյան բարձրացումը, որը պահպանվում է մոտավորապես մինչև հունիս ամիսը, բացատրվում է լեռնային հատվածի ձյան հալմամբ և ըստ երկարության դրանց հոսքով, ինչպես նաև Արաքս գետի ռեժիմի հետ:

Դաշտավայրով գրունտային ջրերի նվազագույն կանգը դիտվում է հոկտեմբեր ամսին, չնայած, ըստ օդերևութաբանական պայմանների, դրան կարելի էր սպասել հուլիսին:

1946թ. հունվարից մինչև 1949թ. հոկտեմբերը, ՀԽՍՀ ջրային տնտեսության Նախարարությունը հետևել է ջրերի մակարդակին հողաբարելավման տեսչության հետախուզահորերում, Արարատյան դաշտավայրի գրունտային ջրերի ռեժիմի ուսումնասիրման նպատակով: Անցկացված դիտարկումների արդյունքները ժամանակին ընդհանրացվել են Ն.Բ. Դոլուխանովայի «Հոկտեմբերյանի և Սևջրի շրջանների ոռոգման համակարգի հիդրոերկրաբանական ակնարկ» աշխատությունում:

Նրա կողմից են կազմված նաև գրունտային ջրերի հիդրոդինամիկ և խորության տեղադիրքի քարտեզները 1949թ.-ի հունվար, մայիս, հուլիս և սեպտեմբեր ամիսների համար, այսինքն մոտավորապես հենց այն ամիսների համար, որոնց համար կազմել էր Վ.Ֆ.Զախարովը:

Ըստ Ն.Բ. Դոլուխանովայի տվյալների, 1949թ. գրունտային ջրերի տատանման դինամիկան, ընդհանուր առմամբ մնացել է այնպիսին, ինչպիսին 1929թ.:

Գրունտային ջրերի զգալի վարարման արդյունքում, ավազների և կոպճազաքարերի ստորին հատվածը ներկայացված է ջրահողերով:

Գրունտային ջրերի միջին մակարդակը Արգավանդի տեղամասի սահմաններում 1975թ. մարտ-ապրիլ ամիսներին արձանագրվել է 1.35 մ (0.4 մ-ից մինչև 2.0 մ):

Գրունտային ջրերի մակարդակի տատանման ամպլիտուդը գտնվում է բավականին լայն միջակայքում՝ 1.0-ից մինչև 3.0 մ, երբեմն և ավելի (ջրհանի սեզոնին ոռոգման նպատակով): Ըստ ավելի վաղ կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալների, Արգավանդի տեղամասում գրունտային ջրերի մոտավոր դեբիտը կազմել է 0.2-0.3 լ/վրկ:

6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Արմավիրի մարզի տարածքը 1231 քառ.կմ է, որը կազմում է ՀՀ տարածքի 4.2%-ը:

Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 44կմ է: Մարզն ունի 3 քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) և 95 գյուղական համայնքներ: Համայնքներից 7-ը սահմանամերձ են: Մարզը արևմուտքից և հարավից սահմանակից է Թուրքիային, հյուսիսում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ Երևանին և ՀՀ Արարատի մարզի և ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 130.5 կմ հատված:

Մարզի մշտական բնակչության միջին թվաքանակը 01.01.2022թ.-ի դրությամբ կազմել է 264.4 հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 82.5 հազ.մարդ, գյուղականը՝ 181.9 հազ.մարդ:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող

ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան – Քարակերտ և Երևան – Գյումրի, ինչպես նաև Երևան–Թբիլիսի երկաթուղին: Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկալնդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր:

Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Բեռնատրոհորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: 2021թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- Արդյունաբերություն՝ 5.0 %,
- Գյուղատնտեսություն՝ 22.6 %,
- Շինարարություն՝ 7.3 %,
- մանրածախ առևտուր՝ 4.5 %,
- ծառայություններ՝ 1.5 %:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է 122516.0, մլն. դրամ, պատրաստի արտադրանքի իրացման ծավալը՝ 123953,0 հազ. դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 115.4%: Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 181.0 մլրդ. դրամ, այդ թվում բուսաբուծություն 133.3 մլրդ. դրամ, անասնաբուծություն՝ 47.7 մլրդ. դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները զբաղեցրել են 4267 հա, բերքատվությունը՝ 41.1 ց/հա, համախառն բերքը 18.0 հազ. տ: Կարտոֆիլի մշակման համար նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1182 հա, 389.5 ց/հա, 46.6 հազ. տ:

Արմավիրի մարզի վերաբերյալ մի շարք պաշտոնական վիճակագրական ցուցանիշներ ներկայացված են ստորև(աղ.9-12).

Աղյուսակ 9.

Արմավիրի մարզի մի շարք պաշտոնական վիճակագրական ցուցանիշներ

Պաշտոնական վիճակագրական ցուցանիշներ	
Մարզի մշտական բնակչության թվաքանակը տարեվերջին	2961.4 հազ. մարդ
Համախառն ներքին արդյունքը	6983.0 մլրդ. դրամ
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	2419.4 մլրդ. դրամ
Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը	934.4 մլրդ. Դրամ
Շինարարության ծավալը	510.9 մլրդ. Դրամ
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը	1052.3 մլն. տ/կմ
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը	1072.2 մլն. ուղևոր/կմ

Առևտրի շրջանառությունը	3464.8 մլրդ.դրամ
Ծառայությունների ծավալը	1914.9 մլրդ.դրամ
Գործազուրկների միջին տարեկան թվաքանակը	199.0 հազ.մարդ
Միջին ամսական անվանական աշխատավարձը	204 048 դրամ
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա համեմատ	107.1
Սպառողական գների ինդեքսի միջին տարեկան աճը	0.6
Առողջապահական հիմնարկների քանակը	61
Հիվանդանոցային մահճակալների քանակը, հատ	365
Նախադպրոցական հաստատությունների քանակը	106
Գրադարանների քանակը	76

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի վարչական տարածքի մոտ 78%-ը՝ 96 838.9 հա/։ Մարզում տարիներ շարունակ զարգանում է պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը։ Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար։ Այս բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը։ Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է 55325 գյուղացիական տնտեսությունների միջոցով։ Մարզում կա գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի հինգ շուկաներ։

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով։ Մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությունների, խաղողի տնկարկների, անասնագլխաքանակի վերաբերյալ տվյալները ամփոփված են աղյուսակներ 29-31-ում։

Աղյուսակ 10.

Տեղեկատվություն գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ (2022թ.),

Մշակաբույսը	Ցուցանիշները		
	Ցանքատարածությունները, հա	Բերքատվությունը, ց/հա	Համախառն բերքը, հազ. տոննա
Բանջարանոցային մշակաբույսեր	8661	336.6	345.7
Բոստանային մշակաբույսեր	2804	309.5	86.7
Պտուղ և հատապտուղ	10422	103.4	82.6
Խաղողի տնկարկ	7401	188.2	121.3

Աղյուսակ 11.

Տեղեկատվություն գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ (հազ. գլուխ), 2022թ.

Մարզ	Խոշոր եղջերավոր	Որից՝ կով	խոզեր	ոչխարներ և այծեր	ձիեր
Արմավիր	55.2	16.9	18.0	140.8	0.1

Աղյուսակ 12

Անասնաբուծական արտադրանքի ծավալը, 2021թ.

Մարզ	Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա	կաթ, հազ. տ	ձու, մլն. հատ	բուրդ, տ
Արմավիր	20.3	41.0	160.0	245.5

Արդյունաբերությունը մասնագիտացված է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ակոհոլային խմիչքների արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղություններում: Նախկինում մարզն ունեցել է նաև հզոր արդյունաբերություն, այնպիսի արդյունաբերական զիգանտներ, ինչպիսիք են եղել պահածոների մի քանի գործարաններ, կահույքի ֆաբրիկաներ, մի շարք ռազմական ուղղվածության գործարաններ: Այսօր մարզում կան գյուղատնտեսությամբ զբաղվող մանր ու միջին տնտեսություններ, գյուղմթերքներվերամշակող գործարաններ: Մարզի տարածքում գործում են 76 արտադրական ձեռնարկություններ և 870 առևտրային կազմակերպություններ:

Մարզում առկա են նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել նաև արդյունաբերությունը:

Վերջին տարիներին մարզում զարգանում են ձկնային տնտեսությունները: Մարզում արտադրված ձուկը մեծ պահանջարկ ունի հանրապետությունում:

ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 593.9կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 109կմ, հանրապետական նշանակության՝ 186կմ, մարզային նշանակության՝ 209.4 կմ, համայնքային նշանակության՝ 89.5 կմ:

Արմավիրի մարզում առկա է 99 մշակույթի տուն, 102 գրադարան, 8 թանգարան, 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, 2 թատերախումբ, 3 տիկնիկային թատրոն: Մարզում գործում են 58 առողջապահական հիմնարկներ, որոնցից 8-ը՝ մարզպետարանի ենթակայության, 50-ը՝ համայնքային ենթակայության գյուղական բժշկական ամբուլատորիաներ, որոնց կազմում ընդգրկված են 43 բուժական կաբարձական կետեր:

Մարզը բնակչությամբ միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են ասորիներ, եզդիներ, քրդեր և ռուսներ:

6.1. Ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական բնութագիրը

Հայցվող տեղամասը մտնում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի վարչական սահմաններում (նկ.11):

6.1.1. Մեծամոր համայնք

Մեծամոր համայնքը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Մեծամոր քաղաքը, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արագափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան գյուղերը: Համայնքի կենտրոնն է Մեծամոր քաղաքը, տարածքով ամենամեծ բնակավայրը՝ Եղեգնուտն է, ամենափոքրը՝ Ջրաշենը, իսկ բնակչության թվաքանակով ամենամեծ բնակավայրը՝ ք.Մեծամորն է և գ.Մրգաշատը, ամենափոքր՝ գ. Բերքաշատը:



Նկ. 11: Մեծամոր քաղաքի համայնապատկերը

Մեծամոր համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիսային մասում: Համայնքը հյուսիսից սահմանակից է Արմավիր համայնքին, արևելքից՝ Խոյ և Արաքս համայնքներին, հարավից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևմուտքից՝ Բաղրամյան համայնքին:

Մեծամոր քաղաքը հիմնադրվել է 1969թ՝ որպես տարածաշրջանում միակ ԱԷԿ-ը կառուցողների և շահագործող անձնակազմի ավան: Մեծամոր քաղաքը տեղական ազգային տարրերով՝ մաքուր սովետական մոդեռնիստական նախագիծ-ծրագիր է,

որը նախագծվել է 1967-1986 թթ. Հայպետնախագիծ ինստիտուտի երրորդ արվեստանոցում: 1972թ. դարձել է բանավան, իսկ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թվականի փետրվարի 20-ի Հ.նխ-431-1 որոշմամբ ստացել է քաղաքի կարգավիճակ:

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 40 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Արմավիր քաղաքից 8 կմ հեռավորության վրա:

Հայաստանի ատոմակայանի աշխատողների համար նախագծված քաղաքի հյուսիս- հարավ թեքությամբ տեղանքը հարում է Երևան-Արմավիր մայրուղուն և համայնապատկերում, իբրև բնեռներ, ունի Արարատ ու Արագած լեռները: Այս փոքրիկ քաղաքը պետք է ունենար երեք բնակելի միկրոշրջան, համաքաղաքային նշանակության շենքերով հյուսված կենտրոն, հիվանդանոցային համալիր և կոմունալ-կենցաղային շինությունների գոտի:

Կենտրոնը կազմող հասարակական նշանակության շինությունները՝ մշակույթի տուն (1975-1986թթ.), հյուրանոց (1974-1977թթ., շահագործման է հանձնվել 1979թ.), կապի բաժանմունք (1980թ.), վարչական շենքեր (1974-1977 թթ.), լուծված են տարածական միահյուսումներով: Նրանք իրար միացված են ներքին գողտրիկ բակերով, անցումներով, թփածածկերով: Այդպես, քաղաքային զբոսայգու հետ հյուսված իրար են հաջորդում հասարակական, վարչական, առևտրային ու մարզական գոտիները, որ ավարտվում են հանգստի ու զբոսանքի քաղաքային լճակով: Նշված շինությունների արտահայտչականությունը՝ բազմագույն տուֆի, արևապաշտպան անսրող երկաթբետոնե տարրերի, ապակու և կանաչապատման համադրության արդյունք է:

Քաղաքում գործում է 2 դպրոցական, 3 նախադպրոցական հաստատություններ, մշակույթի տուն, մարզադպրոց, արվեստի դպրոց, գրադարան, բժշկական կենտրոն, փոստային բաժանմունք, 2 հասարակական կազմակերպություններ, եկեղեցի և այլ հասարակական նշանակության օբյեկտներ:

Մեծամոր քաղաքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քաղաքում 2022 թվականի օգոստոսից գործում է «Մեծ ընդ Մոր» ՓԲԸ, որի նպատակն է գործունեությունից ստացված շահույթը ուղղել համայնքում սոցիալական ծրագրերի իրականացմանը: «Մեծ ընդ Մոր» ՓԲԸ զբաղվում է հացաբուլկեղենի արտադրությամբ: Արտադրամասը գտնվում է քաղաք Մեծամորի 1 թաղամաս, վարչական կենտրոն 1/3 հասցեում: Ընկերության աշխատողները համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ներկայացուցիչներ են:

«Մեծ ընդ Մոր» ՓԲԸ առաջինն է հանրապետությունում, որը համայնքի հետ համատեղ գործունեություն է իրականացնում՝ վերը նշված նպատակով:

1. աշխարհագրական դիրք

Մեծամոր համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիսային մասում, ծովի մակերևույթից 830-910 մ բարձրության վրա: Համայնքը հյուսիսից սահմանակից է Արմավիր համայնքին, արևելքից՝ Խոյ և Արաքս համայնքներին, հարավից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևմուտքից՝ Բաղրամյան համայնքին: Երևան քաղաքից համայնքը գտնվում է 35-70 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից 5-25 կմ հեռավորության վրա:

2. Համայնքի կլիմայական համառոտ բնութագիրը

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	190
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին ($^{\circ}\text{C}$)	-5-6
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին ($^{\circ}\text{C}$)	36-38

3. Ընդհանուր տեղեկություններ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
Մեծամոր քաղաք	0
Ալաշկերտ գյուղ	14 կմ
Ամասիա գյուղ	30 կմ
Այգեշատ գյուղ	35 կմ
Արագափ գյուղ	30 կմ
Արգավանդ գյուղ	19 կմ
Արմավիր գյուղ	14 կմ
Արտաշար գյուղ	13 կմ
Արևիկ գյուղ	16 կմ
Բամբակաշատ գյուղ	38 կմ
Բերքաշատ գյուղ	40 կմ
Գետաշեն գյուղ	15 կմ
Եղեգնուտ գյուղ	21 կմ
Երասխահուն գյուղ	7 կմ
Զարթոնք գյուղ	24 կմ
Հայկավան գյուղ	26 կմ
Մարգարա գյուղ	30 կմ
Մրգաշատ գյուղ	12 կմ
Նալբանդյան գյուղ	30 կմ
Նոր Արտագերս գյուղ	29 կմ
Նոր Արմավիր գյուղ	19 կմ
Նոր Կեսարիա գյուղ	25 կմ
Նորապատ գյուղ	9 կմ
Շենավան գյուղ	38 կմ
Ջանֆիդա գյուղ	31 կմ
Ջրաշեն գյուղ	27 կմ
Վարդանաշեն գյուղ	24 կմ

Տանձուտ գյուղ	28 կմ	
Փշատավան գյուղ	33 կմ	
Ակնալիճ գյուղ	7 կմ	
Տարոնիկ գյուղ	11 կմ	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Հոկտեմբերյան, Էջմիածին	
3. Համայնքի կենտրոնի հեռավորությունը`		
3.1) մայրաքաղաքից (կմ)	42 կմ	
3.2) մարզկենտրոնից (կմ)	8 կմ	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	12 կմ	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	8 կմ	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում)(կմ)	8 կմ	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	830-910 մ	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	32,622 քառ. կմ	32. 622,07 հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Արմավիր, Խոյ, Արաքս, Բաղրամյան,	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	metsamormeria@yandex.ru	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	https://mecamorcity.am/	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը		
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	3-48-55	
11. Համայնքի հեռախոսային կոդը	0237	
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո	
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	0910	
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո	

4. Բնակչությունը, բնակչության սոցիալական կազմը

	01.10.22թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	78682
2. Գրանցված ծնունդների քանակը	584
2. Մահացության դեպքերի քանակը	446
3. Ամուսնությունների քանակը	-
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	18056
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1107
7. Կենսաթոշակառուների քանակը	8568
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1441

5. Մշակութային, կրթական, մարզական հաստատություններ

	01.10.2022թ.
1. Գրադարանների քանակը	21, գործող 14
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	4
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	18
5. Հանրակրթական դպրոցների քանակը	33
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1
10. Բժշկական կենտրոններ	1
11. Բուժամբույատորիաններ	20
12. ԲՄԿ	7

6. Բնակելի ֆոնդ

	01.10.2022թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	≈1550000
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	81
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	12931

7. Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն

	01.10.2022թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	32.622,07
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	23.082,06
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	5.670,9
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	23829
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	36696
7. Խոզերի գլխաքանակը	4077
8. Գյուղատնտեսական տեխնիկա	542
8.1 տրակտորներ (քանակը)	518
8.2 կոմբայններ (քանակը)	24
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	15494

8. Ենթակառուցվածքներ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	90
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	4
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	65 (52 գործող, 4 մասնակի գործող, 9 չգործող)
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	173,3 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	222
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	219
6.2 Էքսկավատորների քանակը	19
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 Աղբատար մեքենաների քանակը	5
6.6 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	14
6.7 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.8 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	63,48 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո /2/
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

9. Ֆինանսական ցուցանիշներ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)	Ընդունված բյուջե	Փաստացի 01. 10. 2022
1. Ընդամենը եկամուտներ	2717900,3	1687811,3
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում`	715579,0	328056,0
2.1 հողի հարկ	0	45011,3
2.2 գույքահարկ	715579,0	283044,7
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	1582697,3	1190630,1
3.1 դոտացիա	1582697,3	1187023,7
3.2 սուբվենցիա	0	3606,4
4. Մուտքեր հողի օտարումից	150000,0	46417,3

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)	Ընդունված բյուջե	Փաստացի 01. 10. 2022
1. Ընդամենը ծախսեր	2717900,3	1397796,7
Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)	Ընդունված բյուջե	Փաստացի 01. 10. 2022
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	346615,4	60841,2
Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)	Ընդունված բյուջե	Փաստացի 01. 10. 2022
1. Ընդամենը ծախսեր	936212,9	210931,6

10.Տեղական ինքնակառավարման մարմիններ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից`	01. 10. 2022 253
1. 1 համայնքային ծառայողներ	138
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	987881,8
3. Ավագանու անդամների թվաքանակը	27

11.Համայնքի հիմնախնդիրները

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, վերելականների փոխարինում	Ակնկալվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքի հիմնախնդիրների մեծ մասի լուծումը իրականացնել համայնքի միջոցներով, ինչպես նաև պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ
Փողոցների ասֆալտապատում	
Մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում, վերանորոգում կամ գազաֆիկացում	
Մշակույթի տների, արվեստի և երաժշտական դպրոցների հիմնանորոգում կամ վերանորոգում	
Ջրամատակարարման ցանցի կառուցում	
Խորքային հորերի վերականգնում, շահագործում	
Մարզահամալիրի հիմնանորոգում	
Համայնքի փողոցների գազաֆիկացում, լուսավորում	
Բնակավայրերի բնապահանական խնդիրների լուծում և կանաչապատում	

Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում գործում են պարենային առևտրի փոքր և միջին 162 օբյեկտներ, հեղուկ վառելիք՝ 11, հանրային սննդի կետ՝ 10, գազի լիցքավորման կետ՝ 15, բենզինի լիցքավորման կետ՝ 12:

Մեծամոր համայնքում գործում է հետևյալ հանքավայրերը՝

1. Ջանֆիդայի ավազակույճային խառնուրդի հանքավայր
2. Նալբանդյանի մանրախճային ավազի հանքավայր
3. Արմավիրի մանրախճային ավազների հանքավայր
4. Եղեգնուտի մանրախճային ավազային խառնուրդի հանքավայր
5. Մարգարայի շինարարական ավազի հանքավայր
6. Արգավանդի ԱԿԽ հանքավայր / «Արգավանդ- I» տեղամաս /
7. Արգավանդի ԱԿԽ հանքավայր / «Արևելյան» տեղամաս /
8. Տանձուտի ԱԿԽ հանքավայր / «I» և «II» տեղամասեր /
9. Նալբանդյանի ԱԿԽ հանքավայր / «Հյուսիս-Արևմտյան» տեղամաս /
10. Մարգարայի ավազների հանքավայր / «Արևմտյան» տեղամաս /
11. Արգավանդի դիատոմիտի հանքերեակում

6.1.2. Տանձուտ բնակավայր

Տանձուտ գյուղը գտնվում է ծովի մակերևույթից **855** մ բարձրության վրա, մարզկենտրոնից **11** կմ հարավ-արևելք: Գյուղը զբաղեցնում է **759,32** հա տարածք, ունի **2061** բնակիչ, որից **610** եզդի են: Գյուղը Տանձուտ է անվանվել **1946** թվականի ապրիլի **4**-ին: Բնակիչների նախնիների մի մասը գաղթել են Կարսի և Մուշի գյուղերից, իսկ մի մասն էլ հայրենադարձվել Իրանից: Կան նաև Բերդի, Թալինի, Մարալիկի տարածաշրջաններից **I**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**ե**, հտ. **5**, էջ **34** եկած վերաբնակիչներ: Գյուղում է գտնվում **1912** թվականին կառուցված Սբ. Սահակ եկեղեցին: Գյուղն ունի հանրակրթական դպրոց, նախադպրոցական հաստատություն, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, որոնք ունեն վերանորոգման կարիք: **2022** թվականի սկսվելու է նախադպրոցական հաստատության հիմնանորոգման աշխատանքները: Գյուղում կա նաև գրադարան, զբոսայգի, մարզադաշտ: Գյուղում գործում է սննդամթերքի և տնտեսական առևտրի օբյեկտներ:

Հողային ֆոնդը հիմնականում գյուղատնտեսական նշանակության են: Բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունը, անասնապահությունն ու բանջարաբուծությունն է:

ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ավազակույճազլաքարային խառնուրդի հանքավայրի մի մասը մտնում է Տանձուտ համայնքի վարչական սահմաններում, որի շահագործումից համայնքը ստանում է սոցիալ տնտեսական օժանդակություն: «ՄԱԶՈՒԻ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊ Ընկերությունը նախատեսում է մասնակցել համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին, որոնց ծավալներն ու ժամանակացույցը կքննարկվի համայնքի հետ:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են տեխնածին ճնշումներ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

7.1. Մթնոլորտային օդ

Արդյունահանման աշխատանքների ընթացքում մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծծազագեր: Դրանց աղբյուրներն են հանդիսանում /ըստ նախագծի/`

- բացահանքը
 - տրանսպորտը
 - լցակայանները
- Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են`
- անօրգանական փոշի բարձման - բեռնաթափման և տրանսպորտի աշխատանքներից, լցակայաններից
 - ազոտի և ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ (դիզելային վառելիքով աշխատող մեքենաներից:

Մթնոլորտային օդի վրա արդյունահանման աշխատանքների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են կոմպլեքս հաշվարկներ համաձայն «շինանյութերի արդյունաբերությունում չկազմակերպված արտանետումների հաշվարկման ժամանակավոր մեթոդական ձեռնարկի» (1985 Նովորոսիյսկ):

Ա. փոշու արտանետում

Մթնոլորտային օդի աղտոտումը երկարատև պրոցես է, այն տեղի է ունենալու արդյունահանման աշխատանքների և ջարդիչ կայանի աշխատանքի ընթացքում: Աղտոտումը տեղի է ունենալու փոշու և գազերի տեսքով:

Փոշու արտանետումները կապված են մեքենաների տեղաշարժի, հանութաբարձման և հանքի փակման աշխատանքների հետ: Ծխազագերի աղբյուր են հանդիսանում տրանսպորտային և տեխնիկական միջոցները:

7.1.1 Ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ առաջացած փոշու հաշվարկը

Ընդհանուր փոշու քանակը Q_1 , որը առաջանում է հանքի սահմաններում ավտոինքնաթափի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով և տեղափոխվող բեռից որոշվում է հետևյալ բանաձևով`

$$Q_{1\text{թ}} = \frac{C_1 C_2 C_3 C_6 C_7 N L q_1}{3600} + C_4 C_5 C_6 q_2 F n, \text{ Գ/վրկ}$$

- որտեղ, C_1 - 1.3 գործակից է, որը հաշվի է առնում SHACMAN X 3000 մակնիշի ինքնաթափի թափքի միջին տարողությունը,
- C_2 - 2.0 գործակից, որը հաշվի է առնում մեքենայի միջին արագությունը,
- C_3 - 1.0 գործակից, որը հաշվի է առնում ճանապարհի վիճակը,

C₄- 1.4 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի մակերեսը թափքում,
 C₅- 1.5 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի արագությունը,
 C₆- 0.8 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի խոնավությունը,
 C₇- 0.01 գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ տարվող փոշու մասը,
 n - 4, երթերի թիվը

L – մինչև 0.5 կմ, մեկ երթի հեռավորությունը,

N – 1, մեքենաների քանակը,

q₁- 1450գ, 1կմ վազանցի ժամանակ փոշու գոյացումն է,

q₂ – 0.004գ/մ², թափքի մակերեսի 1 միավորից փոշու գոյացումն է,

F – 12մ², մեքենայի թափքի մակերեսը:

$$1.3 \times 2.0 \times 1.0 \times 0.8 \times 0.01 \times 4 \times 0.5 \times 1450$$

$$Q_{1թ} = \frac{\dots}{3600} + 1.4 \times 1.5 \times 0.8 \times 0.004 \times 12 \times 4 =$$

$$Q_{1թ} = 0.33 \text{ գ/վրկ} = 7.19 \text{ տ/տարի}$$

7.1.2. Լցակույտերից առաջացած փոշու հաշվարկը

Լցակույտի բաց մակերևույթից փոշու արտանետումը որոշվում է «Сборник методики по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами» . Гидрометеоиздат, 1986г.

Լցակույտերից առաջացող փոշու քանակը կհաշվվի հետևյալ բանաձևով՝
 $Q_2 = S W q$, գ/վրկ,

որտեղ, S – լցակույտի տարեկան ձևավոնվող մակերեսն է, – 700մ²

W- 0.000001 կգ/մ²վրկ, փոշու տեսակարար հոսքն է և հանքավայրի ջրհագեցվածությունը,

q – 10, լեռնային մասսայի մանրացման գործակիցն է:

$$Q_2 = 700 \times 0.000001 \times 10 = 0.007 \text{ գ/վրկ},$$

Փոշու քանակի հաշվարկը տաք եղանակին (4-5 ամիս) որոշվում է հետևյալ կերպ.

$$Q_{n.ե.} = \frac{Q_2 \times n \times N \times 3600}{1000000} = \frac{0.007 \times 24 \times 130 \times 3600}{1000000} = 0.078 \text{ տ/տարի}$$

որտեղ, Q₂– 0.007 գ/վրկ, լցակույտերից առաջացած փոշու քանակն է,

n – 24 ժ, 1 օրում ժամերի քանակն է,

N - 130օր, օրերի քանակն է:

7.1.3. Բարձրման աշխատանքների ժամանակ առաջացող փոշու հաշվարկը

Բարձրման աշխատանքների ժամանակ առաջացող փոշին հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{3բ} = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times C \times B_1 \times 10^6}{\dots}, \text{ գ/վրկ}$$

3600

P₁ –0.05 , քարում փոշու ֆրակցիայի մասնիկն է;

P₂- 0.02 ամբողջ փոշուց աերոզոլ թռչող փոշու մասն է 0.5 մկմ չափերով;

P₃ - 1.2 գործակից է , որը հաշվի է առնում քամու արագությունը աշխատանքային հրապարակում;

P₄ - 0.1 գործակից է, որը հաշվի է առնում հանքաքարի խոնավությունը;

P₅ - 0.1 գործակից է, որը հաշվի է առնում հանքաքարի չափերը;

C - էքսկավատորի 1 ժամում կատարած աշխատանքն է բարձելու ժամանակ;

B₁ - 0.7 գործակից է , որը հաշվի է առնում ապարների թափվելը:

$$0.05 \times 0.02 \times 1.2 \times 0.1 \times 0.1 \times 0.7 \times 8 \times 10^6$$

$$Q_{3P} = \frac{\dots}{3600} = 0.018 \text{ գ/վրկ} = 0.4 \text{տ/տարի}$$

7.1.4. Ավտոմեքենայի բեռնաթափում.

Մեքենայի բեռնաթափման ժամանակ առաջանում է փոշի, որի քանակը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$k_1 \times k_2 \times k_3 \times k_4 \times k_5 \times k_6 \times B \times C_1 \times 10^6$$

$$Q_4 = \frac{\dots}{3600}, \text{ գ/վրկ}$$

k₁= 0.05 - փոշու ֆրակցիայի մասնիկի քաշն է

k₂ =0.02 - ամբողջ փոշուց աերոզոլ գնացող փոշու մասնիկն է

k₃ = 1.2 գործակից է , որը հաշվի է առնում քամու արագությունը աշխատանքային հրապարակում

k₄ = 1.0 գործակից է , որը հաշվի է առնում փոշեառաջացման պայմանները

k₅ = 0.1 գործակից է, որը հաշվի է առնում ապարների խոնավությունը

k₆ = 0.1, որը հաշվի է առնում ապարների չափերը

B = 1.1 գործակից է, որը հաշվի է առնում լցակույտի բարձրությունը

C₁ - տեղափոխվող քանակը, 8 տ/ժամ

Լցակույտը լցնելիս՝

$$0.05 \times 0.02 \times 1.2 \times 1.0 \times 0.1 \times 0.1 \times 1.1 \times 8 \times 10^6$$

$$Q_{4U} = \frac{\dots}{3600} = 0.029 \text{գ/վրկ} = 0.65 \text{տ/տարի}$$

Այսպիսով բացահանքից փոշու գումարային արտանետումների ծավալը կկազմի $\Sigma Q = Q_1 + Q_2 + Q_3 + Q_4 = 7.19 + 0.078 + 0.4 + 0.65 = 8.31$ տ/տարի:

Փոշու արտանետումների քանակը խիստ նվազեցնելու նպատակով նախագծով նախատեսվում է ճանապարհների ջրցանում չոր եղանակներին, լցակույտերի վերակուլտիվացիա: Այս միջոցառումները թույլ կտան փոշու արտանետումները կրճատել 70-80%-ով:

7.2. Վնասակար գազերի արտանետումներ

Մթնոլորտային օդը աղտոտվում է ժանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք

հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են աղ.13-ում:

Աղյուսակ 13

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	8.4	8.16	36.4	0.122	3138	4.3

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO_x) գործակիցները վերցված են «Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից» (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO₂) և ազոտի երկօքսիդի (N₂O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Բացահանքի շահագործման ընթացքում օգտագործվելու է 3 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզվառելիքի տարեկան ծախսը կկազմի 5տ: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի տարեկան առավելագույնը 1040 ժամ: Վնասակար գազերի արտանետումների հաշվարկը բերված է աղ.14-ում

Աղյուսակ 14.

Վնասակար գազերի արտանետումներ

Ավտոմեքենայի կատեգորիա	Վնասակար նյութ	Տեսակարար արտանետումներ, գ/կգ	Արտանետումներ, գ/վրկ	Արտանետումներ, տ/տարի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	0.048	0.18
	CH	8.4	0.011	0.042
	NO _x	42.3	0.056	0.21
	ՊՄ	4.3	0.05	0.021

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2\Sigma k_s b, \text{ որտեղ }`$$

Ks - վառելիքում ծծմբի միջին պարունակություն, 0.002 տ/տ

b - վառելիքի ծախս, 5 տ/տարի

$$SO_2 = 2 \times 5 \times 0.002 = 0.02 \text{ տ/տարի (0.0053գ/վրկ)}$$

8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Բացահանքի շահագործումը ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է գործում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Բացահանքի շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը որոշվում է միջավայրին հասցված տնտեսական վնասով: Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանքով առաջացած ծախսերն ու կորուստներն են՝ արժեքային արտահայտությամբ: Տնտեսական վնասը շրջակա միջավայրի աղտոտումից համարվում է կոմպլեքս մեծություն և որոշվում է որպես վնասների գումար, որոնք հասցվում են ռեցիպիենտների առանձին տեսակներին աղտոտող գոտու սահմաններում:

Նախատեսվող գործունեության համար հիմնական ռեցիպիենտներ են համարվում մթնոլորտային օդը և հողային ռեսուրսները:

8.1. Մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնաս

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտված դրամական համարժեքով:

Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով հասված վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ Կառավարության 25.01.2005թ թիվ 91-Ն որոշմամբ հաստատված «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի, որում ՕՍԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

Նախատեսվող գործունեության համար տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91- Ն որոշմամբ հաստատված կարգի՝ Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով.

$$U = \sum_{q=1}^Q \Phi_q \times \sum_{i=1}^I (\Psi_i \times \Phi_i), \text{ որտեղ՝}$$

▪ U - ազդեցությունը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

▪ $\sum_{q=1}^Q$ - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որը համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արդյունաբերական ձեռնարկությունների տարածքների համար ընդունվում է $\sum_{q=1}^Q=4$, շարժական աղբյուրների (բարձիչ, ավտոինքնաթափ և այլն) արտանետումների վնասի հաշվարկման համար $\sum_{q=1}^Q=5$:

▪ Ψ_i - i -րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10-րդ և 11-րդ կետերի:

▪ Φ_i - տվյալ (i –րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակից,

▪ Φ_q - փոխադրման ցուցանիշ, որը հաստատուն է և ընտրվում է էլնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն Φ_q 1000դրամ է:

Φ_i գործակիցն իր հերթին որոշվում է ստորև ներկայացված բանաձևով՝ $\Phi_i = q$ (3

$S_{ui} - 2 U\theta_{ui}$), $S_{ui} > U\theta_{ui}$ (2), որտեղ՝

- S_{ui} - i նյութի տարեկան փաստացի արտանետումներ, տոննա:
- $U\theta_{ui}$ - i -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակ, տոննա
- q - գործակից, որը անշարժ աղբյուրների համար $q=1$, իսկ շարժական աղբյուրների(ավտոտրանսպորտի) համար $q=3$:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում, $\Phi_i = S_{ui}$:

Հաշվարկի ժամանակ առանձնացնել են շարժական և անշարժ աղբյուրները, ընդ որում զարկային արտանետումները ներկայացրված են անշարժ աղբյուրների շարքում:

Արգավանդի ավազակոպճազաքարային խառնուրդի հանքավայրի «Արգավանդ» տեղամասի շահագործման արդյունքում տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

Տնտեսական վնասի հաշվարկ

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. Հազ. ՀՀ դրամ $U = \sum \Phi_i \times q_i$
	S_{ui}	q	$\Phi_i = S_{ui} \times q$			
փոշի	8.31	1	8.31	10	4	332.4
Ածխածնի օքսիդ	0.18	3	0.54	1	5	2.7
Ածխաջրածիններ	0.042	3	0.126	3.16	5	1.99
Ազոտի երկօքսիդ	0.21	3	0.63	12.5	5	39.37
Պ.Մ. /մուր/	0.021	3	0.063	41.5	5	13.0
Ծծմբային անհիդրիդ	0.02	3	0.06	16.5	5	4.95
Ընդամենը						394.41

* Ներկայացված գումարը որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում

Ինչպես երևում է աղյուսակ 25-ից, հանքավայրի շահագործման հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան առավելագույնը մոտ 394.41 հազ. ՀՀ դրամ:

8.2. Հողային ռեսուրսներ

Հողաշերտի վրա ազդեցությունը պայմանավորված է հանքարդյունահանման աշխատանքներով: Հանքավայրի ամբողջ մակերևույթից (4,9հա) հանվելու է շուրջ 10.0 հազմ³ հողաբուսական շերտ, որի հանման, տեղափոխման, պահպանման և օգտագործման կարգը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ (ՀՀ Կառավարության 2011թ 08.09.2011թ N-1396-Ն, 2017թ 2.11.2017թ N 1404-Ն որոշումներ):

Բացահանքի զբաղեցրած տարածքը, որը կազմում է 4.9 հա, դուրս է մնում օգտագործման շրջանակից, այդ մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 1101-Ն՝ «Համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս գտնվող՝ հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների և գյուղատնտեսական նշանակության այլ (անօգտագործելի) հողերի համար» որոշումների:

Հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) դեպքում ԱՎՀԴ -ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$U_{\text{վՀԴ}} = U_{\text{Դ}} \times Կ_{\text{ԳԴ}} \times Գ_{\text{Բ}} \times Գ_{\text{վ}} \times Գ_{\text{ն}}$, որտեղ

- $U_{\text{վՀԴ}}$ -ն հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) հետևանքով խախտված (վնասված) հողամասի (տարածքի) արժեքն է,
- $U_{\text{Դ}}$ -ն հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) ենթարկված հողամասի (տարածքի) մակերեսն է, (4.9 հա)
- $Կ_{\text{ԳԴ}}$ -ն դեգրադացիայի ենթարկված հողամասի (տարածքի) կադաստրային գինն է, որը հաշվարկվում է կարգի 11-րդ կետում նշված կարգով (57,5 հազ. դրամ/հա),
- $Գ_{\text{Բ}}$ -ն հողամասի (տարածքի) բնապահպանական արժեքը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 21-րդ կետի (1.0),
- $Գ_{\text{վ}}$ -ն հողի վնասման աստիճանը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 25-րդ կետի (1),
- $Գ_{\text{ն}}$ -ն շրջակա միջավայրի վրա դեգրադացված հողերի ազդեցությունը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 26-րդ կետի (1).

$U_{\text{վՀԴ}} = 4.9 \times 57.5 \times 1.0 \times 1 \times 1 = 281750$ ՀՀ դրամ

Հողային ռեսուրսներին հասցված տնտեսական վնասը կկազմի 281750 ՀՀ դրամ:

8.3. Ջրային ռեսուրսներ

Հանքավայրի շահագործման ժամանակ ջրային ռեսուրսներն օգտագործվում են փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում, քանի որ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում, իսկ փոշենստեցման համար ջրցանը նախատեսվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որ արտահոսք չառաջանա:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է վերցնել բացահանք ներծծվող ջրերից իսկ աշխատողների խմելու և կենցաղային ջուրը Տանձուտ բնակավայրի ընդհանուր ջրամատակարարման ցանցից ջրօգտագործման թույլտվության և ջրօգտագործման պայմանագրերի շրջանակներում:

Բացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Բացահանքի տարածք թափվող տեղումները կուտակվելու են լճակում: Տեղումների քանակից կախված տեղի է ունենալու լճակի մակարդակի

տատանումներ: Լճակի ջրերը մշտապես լինելու են շարժման մեջ, մի կողմից տեղի ունենալու գոլորշիացում մյուս կողմից՝ ջրի վերականգնում, ինչը դրական է անդրադառնալու լճի էկոհամակարգի վրա: Լճակը մշտապես մատակարարվելու է թարմ ջրով:

Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 2,

N - ԻՏՍ և գրասենյակային աշխատողների ջրածախսի նորման՝ - 0.009մ³,

n_1 - քանվորների թիվն է - 2,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով, $W = (2 \times 0.009 + 2 \times 0.025) \times 260 = 17.68$ մ³/տարի, միջին օրական 0.068մ³:

Կենցաղային կեղտաջրերը՝ $0.218 \times 0.85 = 0.18$ մ³ օրական լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են սահմանված կարգով:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ² տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ²: Փոշենստեցման մակերեսները կազմում են լցակույտի վրա 17700մ² և ավտոձանապարհների վրա 500մ², ընդամենը 18200մ²: Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ², կստանանք՝ $18200 \times 0.5 = 9100$ լիտր:

Նախատեսվում է ընդունել 1 ջրող ավտոմեքենա 6տ ջրի տարողությամբ, որը այդքան ջուրը ցնցուղում է 2 երթով, աշխատանքային հրապարակը՝ 2 անգամ:

8.4. Բուսական և կենդանական աշխարհ

Արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա կանխատեսվում է աննշան, քանի որ ընդհանուր առմամբ տարածաշրջանը հանդիսանում է տնտեսապես յուրացված գոտի: ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել: Կենդանական աշխարհի դիտարկված տեսակներն ունեն լայն տրածքում ՀՀ տարածքում և գրանցված չեն ՀՀ Կենդանիների կարմիր գրքում: Այնուամենայնիվ նախատեսվող աշխատանքների ընթացքում գործարկվող սարքավորումների աղմուկը, թրթռումները, ինչպես նաև անձնակազմը կհանդիսանան անհանգստացնող գործոններ, որոնք հնարավորինս կմեղմվեն շինարարական լավ պրակտիկայի կիրառման և ԲԿՊ- ով ամրագրված մեմագնող միջոցառումների իրականացման շնորհիվ:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս բացառվում է:

8.5. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայցվող տարածքի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Հանքավայրից մոտ 2.5 կմ հեռավորության վրա է գտնվում «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը նախատեսվող գործունեության

արդյունքում որևէ բացասական ազդեցություններ չի կրելու:

8.6. Պատմամշակութային հուշարձաններ

Հանքավայրի շահագործման ընթացքում որևէ ազդեցություն պատմամշակութային արժեքների վրա չի կանխատեսվում: Պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում պետք է դադարեցվեն բոլոր տեսակի աշխատանքներն ու տեղեկացնել պետական լիազորված մարմին: Հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

8.7. Աղմուկ, թրթռումներ

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը չի գերազանցի թույլատրելի մակարդակը: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (45դԲԱ):

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով նախատեսվում է մշակել ժամանակացույց գիշերային աշխատանքը հանքավայրի տարածքում կանոնակարգելու նպատակով, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների կիրառումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղադրել խլացուցիչներ:

Հանքարդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված հնարավոր է առաջանա նաև առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 112դԲԱ:

8.8. Սոցիալական ազդեցություններ

Արդյունահանման աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը: Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում հայցվող տեղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը քննարկվել է համայնքի բնակիչների հետ, որոնց մանրամասները արտացոլված են համապատասխան արձանագրություններում (արձանագրությունը և

տեսաձայնագրությունը ներկայացված է սույն հաշվետվությանը կից): Քննարկվել է համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերը, ինչպես նաև արդյունահանման աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը: Հանքավայրի շահագործման տևողությունը՝ համաձայն նախագծի, կազմում է 20 տարի: Տեղամասի շահագործման կամ փակման արդյունքում բնակչության տարահանման խնդիրներ չեն առաջանում:

Նախատեսվում է բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավվել մոտակա համայնքների բնակչությանը: Ըստ նախնական տվյալների նախատեսվում է հանքավայրում աշխատանքի ընդունել 8 մարդ, ինչը հնարավորություն կտա բարելավել այդ ընտանիքների սոցիալական վիճակը:

Սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող պարտավորությունների նախնական չափը կազմում է տարեկան 500 հազ. դրամ, որը համայնքի կողմից նախատեսվում է օգտագործել համայնքի տրամադրության տակ գտնվող տեխնիկաների վերանորոգման, սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրման և համայնքային այլ կարիքների համար:

Բացի այդ «ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն նախատեսում է պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ՝ քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

8.9. Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն 245-71 Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի, առանց պայթեցման աշխատանքների շինարարական նյութերի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարապաշտպանիչ գոտի: Հանքավայրի տեղամասին ամենամոտը Տանձուտ և Արևիկ բնակավայրերն են: Դրան հանքավայրից գտնվում են 1.8 կմ հեռավորությունների վրա, ինչը ավելի քան 30 անգամ գերազանցում է սահմանված սանիտարական գոտու հեռավորությանը:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության գնահատման մատրիցը (աղ.16)

Աղյուսակ 16

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության գնահատման մատրիցը

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ	
	Մերձատար ճանապարհների վերանորոգում	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
հողեր	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
ջրեր	-	-
Կենդ. և բուսական աշխարհ	աննշան	աննշան
Պատմամշակութ. հուշարձաններ	-	-

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) համաձայն(աղ.17): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հաշվի առնելով, որ հանքավայրի տարածքում բացակայում է բուսականությունը, գետային ցանցերը, շինարարական կառույցները և հուշարձանները, ապա շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հիմնականում հետևյալ բնապահպանական միջոցառումները.

➤ Բացահանքի շահագործում

- Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա գոիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաներում՝ դրանց հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար (եթե առկա է նման հնարավորություն):
- Մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար: Հանքավայրի տարածքում իրենց սպառողական հատկությունները կորցրած, բանեցված յուղերի և քսայուղերի պահեստավորում, պահպանում չի նախատեսվում:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, համաատասխան աղբահավաք ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:
- Փոշենստեցման նպատակով հանքավայրին մոտեցող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար նախատեսվում է դատարկել հատուկ ծառայության ուժերով պայմանագրային հիմունքներով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ ներքին լցակույտավորում արդյունահանման աշխատանքներին զուգահեռ և վերջնական փակում: Հանքի

փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը կազմում է 1621.41 հազ. ՀՀ դրամ, որի մանրամասները բերված են հանքի փակման ծրագրում և ՇՄԱԳ-ի 10-րդ բաժնում: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին՝ ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733- Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

- Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, կկազմվի հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կնկարագրվեն բացահանքի, արտադրական հրապարակի լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

- Թափոնների կառավարման նպատակով բանեցված մեքենայական յուղերի և քսայուղերի փոխարինումը կիրականացվի մասնագիտացված ընկերություններին կողմից: Մաշված անվադողերը, կապարե կուտակիչները ևս չի նախատեսվում պահել հայցվող տեղամասի տարածքում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպություններում:

- Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

- 1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

- 2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

- 3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպատակավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ զենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Կենդանական և բուսական աշխարհի պահպանության նպատակով արդյունահանման աշխատանքներում ներգրավված անձանց և հարակից տարածքների բնակիչների իրազեկվածության համար շին. հրապարակում կտեղադրվեն տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկարներով պաստառներ, որպեսզի դրանք լինեն հեշտ ճանաչելի և ապահովվի դրանց պահպանություն:

- Կենդանական և բուսական աշխարհի պահպանության նպատակով հանքավայրի շահագործման աշխատանքներում ներգրավված անձնակազմի համար կանցկացվեն ուսուցողական դասընթացներ՝ ծանոթացնելու համար տվյալ տարածաշրջանում ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված կենսաբազմազանության տեսակներին:

- Կենդանական և բուսական աշխարհի վերահսկման նպատակով տարեկան մեկ անգամ նախատեսված է իրականացնել մասնագիտական մշտադիտարկում: Կարմիրգրքային տեսակներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել բոլոր տեսակի աշխատանքներն ու դիմել համապատասխան կառույցներին, վերջիններիս մասնագետների հետ կազմել տեսակների պահպանման միջոցառումներ:

Միջոցառումների կազմակերպման ծախսերը կիրականացվեն ընկերության կողմից:

- Կիրականացվի աշխատակիցների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ՝ հիմնվելով նաև յուրաքանչյուր աշխատողի որակավորման և աշխատանքային պարտավորությունների վրա:
- Հանքավայրի տարածքի պարագծով կտեղադրվեն նախազգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել պատակահան և/կամ անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

9.1. Շրջակա միջավայրի մշտադիտարկումների պլան

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում գործունեություն նախաձեռնող ընկերությունը պետք է իրականացնի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ:

Հանքավայրի շահագործման ազդեցությունը կանոնակարգելու նպատակով մշակվել է մոնիթորինգի պլան, որի միջոցով հնարավոր կլինի ստանալ տեղեկատվություններ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա եղած ազդեցությունների վերաբերյալ և ժամանակին կարգավորել՝ սահմանափակելով դրանք համապատասխան մեղմացուցիչ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Շրջակա միջավայրի պահպանության նպատակով մշակված մեղմացնող միջոցառումները նախատեսված են նախապատրաստական, շահագործման և ռեուլտիվացիայի փուլերի համար:

Մթնոլորտային օդի որակի գնահատման մշտադիտարկումների համար նախատեսվող սարքավորումների տեղադրման վայրերի որոշմանը մեծապես օժանդակում են եղանակային պայմանները և տոպոգրաֆիան:

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումները պետք է իրականացվեն բավարար հաճախականությամբ, իսկ դրանց արդյունքները ենթարկվեն ստուգման:

Ստացված արդյունքները պետք է լինեն հասանելի հանրության լայն շերտերի համար: Մոնիթորինգի արդյունքները նախատեսվում է գրանցել այդ նպատակով կազմված և հաստատված հատուկ գրանցամատյանում:

Հանքավայրի շահագործման ընթացքում «Մաքուր ավազ պլուս» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի՝ մասնավորապես փոշու քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ,
- աղմուկի մակարդակի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ հաճախականությամբ,
 - ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով, մասնավորապես օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով, հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ հաճախականությամբ, կենսաբազմազանության մշտադիտարկում՝ ըստ անհրաժեշտության, որի պարբերությունը կսահմանվի օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացվող կազմակերպության կողմից՝ հիմնվելով հայցվող

տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից: Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ու դրա արդյունքների տրամադրումը լիազոր մարմնին իրականացվելու է ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջների համաձայն (աղ18):

Մշտադիտարկման կետերի տեղադիրքերի սխեման ներկայացված է նկ. 12-ում:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ. դրամ:

Հանքի փակումից հետո նախատեսվում է մշտադիտարկումների իրականացում ևս 5 տարի ժամկետով, որի նպատակը կայանում է՝

- օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ բացահանքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ) գնահատելու և վերակուլտիվացիոն աշխատանքների արդյունքների գնահատման համար:բացահանքի հարակից տարածքում՝ ռելիեֆի հնարավոր դեֆորմացիաները գնահատելու նպատակով:


Մշտադիտարկումների պարբերականությունը նախատեսված է տարին 1 անգամ, շտադիտարկման ձևը՝ տեղագնություն:

Օգտակար հանածոյի արդյունահանված և դրան հարակից տարածքներում ևս 5 տարի մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռնի ստեղծելու տեղեկատվական հենք փակված հանքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների փոփոխության վերաբերյալ:

Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ ներկայացվող հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն արտադրական հրապարակում կնախատեսի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր կլինի արտակարգ իրավիճակների դեպքում կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, փրկարար ծառայության և շտապ օգնության հետ:

Հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, որի արդյունքում տրամադրվում է փորձաքննական եզրակացություն և անվտանգության վկայագիր, որոնցում ամրագրվում են նաև արտակարգ իրավիճակների հետ կապված խնդիրները:



Նկ.12: Մշտադիտարկումների կետերի տեղադիրքը: 1. 8424135, 4435553 (հող, օդ, ջուր), 2. 8423227, 4439119 (հող, օդ, ջուր), 3. 8423697, 4435399 (հող, օդ, ջուր), 4. 8422949, 4440824, (հող, օդ, կենդ. և բուսական աշխարհ), 5. 8421820, 4438247 (հող, օդ, կենդ. և բուսական աշխարհ): Կարմիր շրջանակի արեալում նախատեսվում է կենդանական և բուսական աշխարհի մշտադիտարկում:

10. ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

